ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1949 *Общественные науки*

Ս. Հակոբյան

Ն. ՅԱ. ՄԱՌԸ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Ականավոր մարքսիստ գիտնական ակադեմիկոս Ն. Մառը իր բազմաթիվ և հատկապես „Ани“ (Երևան, 1939 թ.), „Кавказский культурный мир и Армения“ (СПб. 1915 г.), *„К столетию дня рождения М. И. Броссе“* (СПб. 1902 г.), *„Новые материалы по армянской эпиграфике“* (ЗВО РАО, т. VIII, СПб. 1893 г.), *„Надпись Епифания, католикоса Грузии“* (ИИАН, СПб. 1910 г.), *„Сборники притч Вардана“* (СПб. 1894 г.), *„По поводу работы архит. Т. Тораманяна“* (ЗВО, т. XIX, вып. I, 1909 г.), *„Кавказ и памятники его духовной культуры“*, (СПб. 1919), *„Батум—Ардаган—Карс исторический узел межнациональных отношений Кавказа“* (Петроград, 1922 г.) *աշխատություններում ոչ միայն շոշափել, այլև գիտականորեն լուծել է միջնադարյան հայկական քաղաքի և հայ ժողովրդի սոցիալական պատմության բազմաթիվ հարցեր, որոնց պարզաբանումն ու ընդհանրացումը մեզ հնարավորություն է ընձեռում գիտական հիմքի վրա դնելու քաղաքների ծագման, զարգացման, կառուցվածքի, ներքին ու արտաքին առևտրի, դասային ու սոցիալական հարաբերությունների, վարչական կարգերի, արհեստային արտադրության զարգացման և համքարությունների գոյության պրոբլեմները։ Հայտնի է, որ վերոհիշյալ պրոբլեմները մեր ժողովրդի պատմության ամենակնճռոտ և դժվար լուծելի հարցերից են։ Առանց այդ պրոբլեմների դոնե մոտավոր պարզաբանման, մենք անկարող ենք լուծել հայ հասարակության սոցիալական կյանքի բազմաթիվ ինդիրները՝ ասենք հողային հարաբերությունների, ճորտական իրավունքի զարգացման, ֆեոդալական տնտեսության բնույթի, քաղաքային կյանքի բուռն վերելքի և քաղաքներում առաջացած նոր հարաբերությունների ու դրանց հետ սերտորեն առնչվող այլև այլ հարցեր։ Ակադ. Մառից հետո քաղաքների և քաղաքային կյանքի պատմության հետազոտությունը շատ առաջ չի տարվել, եթե չհաշվենք ակադեմիկոս Հ. Մանանդյանի երեք աշխատությունները „О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен“ (Երևան, 1930 թ.), «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» (Երևան, 1934 թ.) և «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում» (Երևան, 1940 թ.), որտեղ ակադեմիկոս Հ. Մանանդյանը գերազանցապես տալիս է քաղաքների տեղագրությունը, առևտրական տրանզիտային ուղիները, արտաքին ու ներքին առևտուրը, բայց ոչ քաղաքների ներքին իրական կյանքի պատմությունը։*

Հայկական միջնադարյան բազմաթիվ քաղաքներից միայն Անին է, որ հետազոտվել և ուսումնասիրվել է բազմակողմանի կերպով։ Անի քաղաքի պատմությունը դարձել է հայ, ռուս և եվրոպական գիտնականների

ուսումնասիրության սիրված թեմաներից մեկը։ Նրա պատմությամբ զբաղվել են նաև Թորամանյանը, Հ. Օրբելին, Մինաս Բժշկյանը, ակադ. Մ. Բրոսեն, Ալիշանը, Քուրքչյանը, Սարգիս Ջալալյանը, Հ. Ներսես Սարգսյանը, Ա. Մուրավյովը, Լեոն և ուրիշները։[1]

Սակայն այս բոլոր զիտնականները, ճանապարհորդները իրենց աշխատություններում հատկապես տվել են քաղաքի արտաքին նկարագիրը։ Անի քաղաքի ներքին կյանքը, նրա պատմական անցյալի զիտական հետազոտությունը սկսվում և վերջանում է ակադ. Ն. Մառով։ Նա մեր պատմագրության մեջ առաջինն էր, որ հետազոտեց ոչ միայն Անիի պատմությունը, այլև պեղեց Անիի նյութական կուլտուրայի հուշարձանները, այն բաղդատեց և լրացրեց աղդային պատմագիրների բազմաթիվ վկայությունների հետ և զիտական հիմքի վրա գրեց «Աշխարհահռչակ Անիի» պատմությունը։

Ն. Մառը մեր պատմագրության մեջ առաջինն էր, որ դուրս եկավ հայ կղերա-աղդայնական տրադիցիոն պատմագրության այն դրույթի դեմ, որ իբր թե Բագրատունիների թագավորության անկման հետևանքով Հայաստանում քաղաքական կյանքը հետադիմում է և ապրում է իր մայրամուտը։ Նա, ընդհակառակը, ապացուցեց, որ Բագրատունիներից հետո էլ Հայաստանում քաղաքային կյանքն ընդհանրապես և Անիում մասնավորապես, ոչ միայն կանգ չի առնում, այլ աճում ու բարդավաճում է։ Քաղաքների և նրանց պատմական անցյալի մասին հայ տրադիցիոն պատմագրության այդ դրույթը, գրում է մեծ զիտնականը, «Անհայտ է, թե դեռ որքան ժամանակով կշարունակվեր, եթե չսկսվեին Անիի հնագիտական պեղումները»։

Մառը իրավամբ հայ ժողովրդի պատմական անցյալի կնճռոտ հարցերը լուծելու խնդրում խոշոր նշանակություն էր տալիս հնագիտությանը։ «Քարերը,—գրում է նա,—խոսում են ուսուցիչն տեղաշարժերի մասին, երբ այնքան առատորեն գրված հայրենի պատմությունը նրանց մասին լռում է որպես գերեզմանոց»։[2]

Քաղաքների զիտական պատմությունը ըստ Ն. Մառի, շարադրել անհնարին է, առանց հնագիտական պեղումների։ Քաղաքների պատմության համար միայն գրավոր, այն էլ կցկտուր, իսկ շատ հաճախ միտումնավոր գրավոր աղբյուրները մեզ շատ բան չեն տալիս, եթե այդ վկայությունները չստուգվեն ու լրացվեն նյութական կուլտուրայի հուշարձաններով։

«Անի քաղաքի պատմությունը, գրում է Մառը,—ինչպես տյն շարադրված է գրողների մոտ, կարող է մեր ուշադրությունը գրավել տասը,

---

[1] Թ. Թորամանյան, «Անի բաղաք թէ Ամրոց» (Տես ազգագրական հանդես, 1912 թ.), նույնի «Հայկական ճարտարապետության պատմություն», հատոր 1-2-րդ։ Հ. Օրբելի—«Անւոյ աւերակներն», Վաղ-պատ, 1911 թ.։ Մ. Բժշկյան—«Ճանապարհորդություն ի Լեհաստան, 1830 թ.։ Brosset—„Les ruines d'Ani" (I—II, 1860—1861)։ Ալիշան—«Շիրակ», Վենետիկ, 1881։ Նույնի «Տեղեկագիր հայոց Մեծաց»։ Նույնի «Երշարք հայկականք»։ «Պ. Քուրքչյանի լուսանկարչական ալբոմի հնագիտական արժեքը (տես «Փորձ», 1880 թ., № 10-րդ)։ Սարգիս Վարդապետ Ջալալյան—«Ճանապարհորդություններ», Թիֆլիս, 1858 թ.։ Муравьев—„Грузия и Армения", Тифлис, 1848 թ. ч. II. Լեո—Անի, Երևան, 1940 թ.։ Խ. Արովյան—«Վերք Հայաստանի»։

[2] Н. Марр, „Ани", Ереван, 1939 г., стр. 25.

[3] Н. Марр, „Ани", М. Л. 1934 г. Предисловие, стр. X.

քան բոպեւ Նա (քաղաքի պատմությունը) դրավոր աղբյուրներում ներկայացված է ազքատիկ, համեմատած այն պահանջների հետ, որ ծագում է մեր մեջ, երբ մենք դեմ առ դեմ հանդիպում ենք իրեն՝ քաղաքին և նրա հուշարձաններինն։[1]

«1892 թվականին՝ առաջին պեղումները,—շարունակում է Մառը,—պետք է բաց աներին մեր աչքերը նրա տրագիցիոն պատմագրության նկատմամբ։ Բագրատունիների թագավորության անկումը և Անիի հայերի քաղաքական անկախության կորուստը երբեք էլ իրենց հետ չբերեցին հայկական կուլտուրայի և մասնավորապես Անիի արվեստի անկում։ Քաղաքը շարունակում էր իր աճը և 1043 թվականից հետո էլ, երբ նա դադարում է Բագրատունիների տոհմական արքայանիստ կենտրոն լինելուց, հյուրանոցների, քարվանսարաների և նրանց հարակից շինությունների պեղումները մասամբ... մեզ նյութեր են տալիս լրացնելու Անիի, այդ սկզբնական շրջանի պատմության վերածնության բացը»։[2]

Պեղումների հարուստ նյութերի հիման վրա ակադեմիկոս Մառը հանգեց այն եզրակացության, որ ընդհուպ մինչև 13-րդ դարի երկրորդ կեսերը Հայաստանը քաղաքային շինարարության զարգացման համար անօրինակ ժամանակաշրջան էր ապրում։

* * *

Մինչ մարքսիստական պատմագրությունը, բուրժուական պատմական գիտության ներկայացուցիչները քաղաքների ծագման և առաջացման պատմության հիմքում գրել են արտաքին կարգի գործոններ։ Նրանց կարծիքով հին և միջնադարյան քաղաքները ծագել և առաջացել են գերազանցապես տրանզիտային առևտրական ուղիների վրա և աշխարհագրական ու ռազմա-ստրատեգիական նպաստավոր վայրերում։ Անկասկած է, որ մենք այդ գործոնների դերը բացասել չենք կարող։ Աշխարհագրական նպաստավոր պայմանները և տրանզիտային առևտրական ուղիները հանդիսացել են քաղաքների առաջացման ու զարգացման արագացնող գործոններ և ոչ ավելին։ Քաղաքների, արհեստային արտադրության, առևտրի, երկրի վարչա-քաղաքական կենտրոնների առաջացման պրոցեսը սերտորեն զուգակցված է երկրի ֆեոդալիզացման պրոցեսի և արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների զարգացման հետ։ Այս կամ այն երկրի, երկրամասի և նույնիսկ առանձին իշխանությունների ֆեոդալիզացման պրոցեսն ընթացել է ոչ միայն ագրարային հարաբերությունների զարգացման ու խորացման, այլև ֆեոդալական քաղաք-ամրոցների առաջացման ուղիով։ Քաղաք-ամրոցները, արքայական և իշխանական դղյակ-պալատները առաջացել են ամենից առաջ երկրի այն մասերում, որտեղ անհամեմատ ավելի բարձր աստիճանի է հասել հողագործությունը, կուլտուրական և տեխնիկական բույսերի մշակույթը, որտեղ ֆեոդալական պալատ-դղյակի սպառողական կարիքները բավարարելու համար հանդես են եկել արհեստները, շուկայական ներքին կապերը, ապրանքափոխանակությունը ու դրամական շրջանառությունը։ Քաղաքները և քա-

[1] Н. Марр, „Ани", Ереван, 1939 г. стр. 4.
[2] Н. Марр, „Ани", стр. 60—61.

ղաքատիպ վայրերը ստեղծվում էին հատկապես երկրի այն մասերում, որտեղ ամենից վաղ առաջացել էին տնտեսական կապեր առանձին մասերի, իշխանությունների, իսկ ավելի ուշ՝ առանձին երկրամասերի միջև։ Տնտեսական այդ կապերը իրենց հերթին խթանում էին արհեստային արտադրության և ապրանքափոխանակության զարգացմանը։ Հանդես էին գալիս բազմաթիվ և բազմատեսակ արհեստներ, որոնք արտադրում էին ոչ միայն սպառողական կարիքները բավարարելու, այլև շուկաների համար։

Մարքսը՝ խոսելով ֆեոդալական արտադրողական եղանակի պայմաններում արտադրողական ուժերի զարգացման մասին, նշում է, որ գյուղացին, նույնիսկ այս պայմաններում, հնարավորություն ուներ զբաղվելու տնային արհեստներով։ Ֆեոդալական հասարակարգի արտադրողական ուժերի զարգացումն ընթանում է ոչ միայն տեխնիկական մակարդակի բարձրացման, այլև արհեստային արտադրության զարգացման գծով։ Առանձին ֆեոդալների կալվածքներում, վանքերին ու եկեղեցիներին կից, արդեն ստվար թիվ են կազմում ճոռտ արհեստավորները՝ կավագործները, տակառագործները, խառատները, դարբինները, կաշեգործները, ատաղձագործները և այլն։ Բացի ճոռտ արհեստավորներից, ֆեոդալ կալվածատերը շահագործում էր նույնիսկ թափառաշրջիկ արհեստավորներին և նրանց արտադրանքի մի մասը դուրս էր բերում շուկա։ Հետագայում, ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ արհեստային արտադրության բնագավառում, արտադրողական ուժերի զարգացումը ստեղծում էր տնտեսական բոլոր նախադրյալները աշխատանքի հասարակական բաժանման, արտաքին և ներքին շուկայական կապերի զարգացման համար։ Աշխատանքի հասարակական բաժանումը առաջ բերեց արհեստային արտադրության բաժանումը երկրագործությունից և հիմք հանդիսացավ ֆեոդալական քաղաքների առաջացման ու զարգացման։ Այս պայմաններում ֆեոդալական քաղաք-ամրոցը արդեն հանդիսանում է ոչ միայն ֆեոդալի վարչա-քաղաքական, այլև արհեստային արտադրության և առևտրի կենտրոնը։

«Ստեղծվում էին,—գրում է Էնգելսը,—նոր քաղաքներ. նրանք բոլորն էլ շրջապատված էին պարիսպներով և խոր փոսերով. նրանց բերդերը շատ ավելի անմատչելի էին, քան աղնվականների ղղյակները։ Այդ պարիսպների հետևում զարգացավ միջնադարյան առևտուրն ու արհեստը... Առաջ եկավ քաղաքների միմյանց հետ և մնացած աշխարհի հետ փոխադարձաբար շփվելու պահանջը»։[1]

Ֆեոդալական հասարակարգի պատմության առաջին էտապում քաղաքներն ամենից առաջ ստեղծվում էին ֆեոդալի կալվածքում և հանդիսանում էին նրա մասնավոր տիրույթը։ Ֆեոդալ կալվածատերը ոչ միայն հարկի էր ենթարկում գյուղացիներին, այլև քաղաքում բնակություն հաստատող բնակիչներին։ Ավելին։ Նա ստիպում էր քաղաքի բնակիչներին կատարելու հասարակական հարկադիր աշխատանք։ Նրա ձեռքում էր գտնվում քաղաքի և՛ վարչական և՛ դատական իշխանությունը։ Նա իրավունք ուներ կտակելու, վաճառելու, նվիրելու, օտարացնելու ամբողջ քաղաքներ և գյուղեր։ Պատմական այս ժամանակաշրջանում դեռ գյուղը քա-

[1] Маркс и Энгельс, том XVI, ч. I, стр. 440.

քաղաքականապես իշխում էր քաղաքի վրա, իսկ քաղաքը տնտեսապես շահագործում էր գյուղին։

«Եթե,—գրում է Մարքսը,—միջին դարերում ամենուրեք գյուղը քաղաքականապես շահագործում էր քաղաքին, որտեղ դեռ ֆեոդալիզմը չէր խորտակվել քաղաքների չտեսնված զարգացման հետևանքով, ինչպես Իտալիայում, ապա քաղաքը ամենուրեք, առանց բացառության, շահագործում էր գյուղին տնտեսապես՝ իր մենաշնորհ գներով, իր հարկային սիստեմով, իր ցեխային կարգերով, իր անմիջական վաշխառուական խաբեբայությամբ և՝ վաշխառությամբ»։[1]

Քաղաքներում բնակություն հաստատած առևտրա-արհեստային դասերը համախմբված էին կազմակերպված գիլդիաների և համքարությունների մեջ։ Ոչ միայն քաղաքային շուկաներում, այլև գյուղական վայրերում նրանք հանդես էին գալիս միասնական շահերով՝ անկազմակերպ գյուղական բնակչության հանդեպ, ավելի էժան գնում էին գյուղացու հումույթը, և թանգ գներով վաճառում արհեստային արտադրության արդյունքները։ Բոլոր միջոցներով պայքարում էին գյուղում արհեստային արտադրության զարգացման դեմ և նույնիսկ կանգ չէին առնում գյուղական արհեստավորներին ֆիզիկապես ոչնչացնելու ոչ մի միջոցի առաջ։ Քաղաքային առևտրա-վաշխառուական դասը, արհեստականորեն բարձրացնում էր ապրանքների գները, զբաղվում էր վաշխառությամբ և մեծապես օգտվում էր այն հանգամանքից, որ գյուղացին դեռ տգետ էր և շուկայի հետ թույլ կապված։ Բայց այդ բոլորը չէր։ Նոր բարձրացող առևտրա-վաշխառուական դասը գյուղացու աշխատանքի մի սասն էլ յուրացնում էր վաշխառության և փոխատվության ճանապարհով։ «Արտադրության կապիտալիստական եղանակին նախորդող ժամանակաշրջանում,—գրում է Մարքսը,—վաշխառուական կապիտալը գոյություն ուներ նրա համար բնորոշ երկու ձևով՝... նախ վաշխառությունը ազնվական շռայլողներին՝ առանձնապես հողատերերին տրվող դրամական փոխատվության օգնությամբ. երկրորդ՝...մանր արտադրողներին տրվող դրամական փոխատվությունների օգնությամբ, որոնց թվին է պատկանում նաև արհեստավորը, սակայն հատկապես գյուղացին»։[2]

Որքան ավելի ու ավելի գյուղը առնվում էր առևտրա-վաշխառուական և դրամա-ապրանքափոխանակության ոլորտում, այնքան ավելի ու ավելի գյուղացին ընկնում էր վաշխառուական կապիտալի ցանցը։ Այսպիսով, արտադրողական ուժերի զարգացման և աշխատանքի հասարակական բաժանման հետևանքով ֆեոդալական աշխարհը երկպառակտվեց հողագործական ճորտատիրական գյուղի և արհեստային-առևտրական վաշխառուական քաղաքի միջև։

Միջնադարյան քաղաքները, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Ռուսաստանում և Հայաստանում հանդիսանում էին տիպիկ ֆեոդալական քաղաքներ և արտացոլում էին միջնադարյան հասարակության դասակարգային բնույթը և ֆեոդալական հասարակարգի առանձնահատկությունները։ Միջնադարյան ֆեոդալական քաղաքը հանդիսանում էր

[1] К. Маркс, „Капитал", т. III, стр. 705.
[2] К. Маркс, „Капитал", т. III, стр. 525.

ֆեոդալական հասարակարգի զարգացման հետևանքը, իսկ նրանում բնակություն հաստատած հասարակական խավերն ու դասերը հանդիսանում էին ֆեոդալական կարգերի զարգացման և խորացման արգասիքը։ Հայտնի է, որ ֆեոդալական հասարակարգը բաղկացած էր երկու հիմնական դասերից՝ ֆեոդալ հողատերերից և ճորտ ու կախյալ վիճակում գտնվող գյուղացիներից։ Այդ հիմքի վրա էլ ֆեոդալական քաղաքը հիմնականում արտահայտում էր այդ երկու դասերի դասակարգային ու քաղաքական շահերը։

Ֆեոդալական հարաբերությունների զարգացման առաջին աստիճանում ֆեոդալ հողատերը հանդիսանում էր քաղաքի բացարձակ տեր իշխանը, իսկ քաղաքում բնակություն հաստատող դասերը արտադրում էին ֆեոդալի և նրա արքունիքի սպառողական կարիքները բավարարելու համար։ Ֆեոդալական հարաբերությունների զարգացման և խորացման հետևանքով, արդեն քաղաքներում հանդես են գալիս այն սաղմերը, որոնք աստիճանաբար տանում էին ֆեոդալական քաղաքի անջատումը գյուղից, որը և «հանդիսանում է զարգացած աշխատանքի հասարակական բաժանման հիմքը՝ իրագործվելով ապրանքափոխանակության ուղիով, մի պրոցես, որն իր մեջ է ամփոփում հասարակության տնտեսական կյանքի ողջ պատմությունը»[1]։

Հասկանալի է, որ ֆեոդալական հասարակարգի պատմության առաջին ընթացաշրջանում գյուղի և քաղաքի տնտեսական անջատումը ամբողջապես չի բոլորվում, չի ավարտվում, բայց այն ավելի ու ավելի է խորանում հենց իր ֆեոդալական արտադրական հարաբերությունների հետագա զարգացման պայմաններում։ Ֆեոդալական արտադրական հարաբերությունների զարգացման ու խորացման հետևանքով «...տեղի է ունենում աշխատանքի նոր բաժանում երկրագործության և արհեստի միջև, իսկ դրա հետ միասին աշխատանքի արտադրանքի հետագետ աճող արտադրություն անմիջապես փոխանակության համար, որով և փոխանակությունը առանձին արտադրողների միջև հասարակության համար կենսական անհրաժեշտության է փոխարկվում... Քաղաքակրթությունը ամրապնդում և ուժեղացնում է աշխատանքի իրենից առաջ եղած այս բոլոր բաժանումները, առանձնապես նրանով, որ սրում է հակադրությունները գյուղի և քաղաքի միջև (ընդորում քաղաքը կարող է տնտեսապես իշխել գյուղի վրա, ինչպես հին դարերում, բայց և գյուղը կարող է իշխել քաղաքի վրա, ինչպես միջին դարերում) և ավելացնում է աշխատանքի մի երրորդ, իրեն առանձնահատուկ, վճռական կարևորություն ունեցող բաժանում. նա մի դասակարգ է ստեղծում, որն այլևս արտադրությամբ չի զբաղվում, այլ զբաղվում է միայն արդյունքների փոխանակությամբ—ստեղծում է վաճառականներին»[2]։

Աշխատանքի հասարակական բաժանումը խորացնում է հակադրությունը աշխատանքի գանազան ճյուղերի մեջ, ինչպիսիք են՝ երկրագործությունը, արհեստը, նավագնացությունը և այլն։ «Այժմ բնակչու-

---

[1] К. Маркс, „Капитал", том I, стр. 266.

[2] Ֆ. Էնգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1948 թ., էջ 218 (ընդգծումը հեղինակինն է—Ս. Հ.)։

թյունն ըստ իր զբաղմունքների, գրում է Էնգելսը—բավական հաստատուն խմբերի էր բաժանվում, որոնցից յուրաքանչյուրը մի շարք նոր, ընդհանուր շահեր ուներ, որոնց համար տեղ չկար տոհմի և ֆրատրիայի մեջ, հետևաբար, որոնց սպասարկման համար նոր պաշտոններ էին պահանջվում»[1]

Տնտեսական այս հիմքի վրա է, որ գյուղը անջատվում է քաղաքից, սրվում են սոցիալական և դասային սուր հակամարտությունները և հասարակական յուրաքանչյուր խավ ու դաս, հանդես է գալիս իր քաղաքական ուրույն շահերով և ձգտումներով։

Այսպիսով, ֆեոդալական հասարակարգում քաղաքը ուներ երկակի նշանակություն։ Մի կողմից, մասնավորապես ֆեոդալական հասարակության զարգացման նախնական շրջանում, քաղաքը հանդիսանում էր ֆեոդալական հասարակարգի անբաժանելի մասնիկը, իսկ մյուս կողմից ավելի ուշ շրջանում նույն ֆեոդալական կարգերի քայքայման կարևոր գործոններից մեկը։

Միջնադարյան քաղաքի խրամատները,—գրում է Էնգելսը, «...առանձին հասարակարգերի բաց գերեզմաններն են, իսկ նրանց աշտարակները արդեն ներս էին ցցվում քաղաքակրթության մեջ»։

Ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով արդեն ֆեոդալական քաղաքը հանդես է գալիս ոչ միայն արհեստային արտադրության և առևտրի կենտրոն, այլ ավելի բարդ սոցիալական ու դասային հարաբերությունների բնակավայր և խաղում է պատմական, տնտեսական ու քաղաքական ակտիվ դեր բնատնտեսության քայքայման, նոր արտադրական հարաբերությունների ձևավորման և երկրի քաղաքական ու անտեսական անկախության համար մղած պայքարում։ Այս է ֆեոդալական քաղաքի առաջացման, ձևավորման ու զարգացման պատմական ուղին։

Ակադեմիկոս Ն. Մառը մեր պատմագրության մեջ առաջին անգամ գիտական մարքսիստական հունի մեջ գրեց քաղաքների պատմության կնճռոտ հարցը։ Նա ցույց տվեց, որ 10—13-րդ դարերը հանդիսացել են ոչ միայն հայ ժողովրդի քաղաքական կյանքի բուռն վերելքի և վերածննդի շրջան, այլև պատմական այս էպոքայում ագարակները վեր են ածվել ավանների, ավանները գյուղաքաղաքների և քաղաքացյալ վայրերի, իսկ վերջիններս՝ քաղաքների։ Վկայակոչելով Ասողիկի, Հովհ. Դրասխանակերացու, Արիստակես Լաստիվերացու, Մ. Ուռհայեցու և բազմաթիվ այլ պատմիչների վկայությունները, այն լրացնելով և հարստացնելով հնագիտական պեղումների բազմաթիվ տվյալներով, Մառը ցույց տվեց, որ անտեսական այս վերելքի շրջանում ոչ միայն աճում ու բարգավաճում էին հին հայկական քաղաքները, այլև կառուցվում էին ու առաջ գալիս նոր «աշխարհանոյակ» ու «տիեզերանոյակ» քաղաքներ։

Բազմակողմանի կերպով պեղելով Անին, Մառը հանգեց այն եզրակացության, որ «Անին Բագրատունիների օրոք քաղաք չէր մեր ժամանակվա հասկացողությամբ, այլ հանդիսանում էր թագադիր ֆեոդալի բերդ-ամրոց. անձամբ նա և նրա մերձակիցները զարգարում էին արքայանիստ քաղաքը

[1] Ֆ. Էնգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1948 թ., էջ 150։

[2] Նույն տեղում, էջ 217։

նոր կառուցումներով և մոնումենտալ շինություններով»։[1] Հետագայում խոշոր հողատիրության, արհեստային արտադրության, ներքին և արտաքին առևտրի, դրամական շրջանառության ու ապրանքափոխանակության զարգացման հետևանքով «Անին,—գրում է Մառը,—դառնում է Արևելքի և Արևմուտքի առևտրի և փոխանակության կենտրոնավայր, ժառանգելով ավելի հին, ավելի հայտնի հայկական Դվին քաղաքի ժառանգությունը, դրա հետ է կապված քարվանսարաների և Ախուրյանի վրա տասնյակ գեղեցիկ կամուրջների կառուցումը։ Գոյացել կամ թե զոյանում էր ինքնատիպ քաղաքային կյանք քաղաքի ծերերի ղեկավարությամբ և օրենսդրական իշխանություն՝ քաղաքի սահմաններում։ Այնպես որ, Անին շփվում է մի կողմից նախարարական էպոխայի, կամ հին Հայաստանի անկախ իշխանությունների և մյուս կողմից հայկական գաղութների առաջացման ու ծավալման ժամանակաշրջանի հետ։ Եվ իսկապես,—ամփոփում է մեծ գիտնականը,—բոլորը թեքում է այն բանին, որպեսզի հաստատվի, որ Անին հանդիսանում էր այն հնոցը, որում հայկական ֆեոդալիզմը դեռ իր հայրենիքում փոխակերպվում էր հայկական բուրժուական աշխարհի»։[2]

Մեծ գիտնականը բուրժուական աշխարհ ասելով, երբեք էլ չէր հասկանում ժամանակակից կապիտալիստական աշխարհը, այլ գտնում էր, որ ինչպես Անիի, այնպես էլ Հայաստանի մյուս քաղաքների քաղաքային կյանքի բուռն վերելքը անխուսափելիորեն պետք է որ տաներին դեպի նոր, ավելի առաջավոր հարաբերությունների ձևավորմանը, սակայն այդ պրոցեսը խանգարվեց, բեկանվեց ոչ թե երկրի ներքին զարգացման, այլ դրսի հաճախակի կրկնվող աշխարհավեր արշավանքների հետևանքով։ Հայկական քաղաքային կյանքը, կուլտուրան, արվեստը, գրականությունը, ճարտարապետությունը, ըստ Ն. Մառի՝ նույնպես համապատասխանում էր քաղաքային աշխարհիկ կյանքի զարգացմանը և արտահայտում էր այդ կյանքի իդեաները, աշխարհայացքը, ոճն ու ճաշակը։

«Ինչպես նշել ենք իր տեղում,—գրում է Մառը,—Անիի ճարտարապետության ծաղկումը 12—13-րդ դարերում կապված է հայերի քաղաքական կյանքի զարգացման հետ. այդ էպոխայի հուշարձանների վրա դրված է քաղաքային բնակչության գեղարվեստական իդեաների կնիքը. նրանց վրա զգացվում է հայկական քաղաքային ճարտարապետության ազդեցությունը։ Շիրակավանի տաճարը ֆեոդալական Հայաստանի գավակն է. նրա վրա նկատելի է հայկական ֆեոդալական քաղաքացիական ճարտարապետության ազդեցությունը, նրանում արտացոլված է Հայաստանի թագավորների և իշխանների գեղարվեստական իդեաները»։[3]

Քաղաքային կյանքը, դասային և սոցիալական նոր հարաբերությունները այնքան ուժեղ ազդեցություն են թողել ճարտարապետության և գեղարվեստական ճաշակի զարգացման վրա, որ երբեմն «ճարտարապետական հուշարձանները ծագելով հայ ժողովրդի սոցիալական կյանքի տարբեր միջավայրում, ավելի քիչ են ցուցաբերում նմանության ընդհանուր գծեր, քան այն հուշարձանները, որոնք ծագել են երկու տարբեր ժողովուրդների՝

[1] Н. Марр. "Ани", стр. 62.
[2] Н. Марр. „Ани", стр. 65—66.
[3] Նույն տեղում, էջ 226։

հայերի և վրացիների սոցիալական միևնույն միջավայրումն։[1] Քայլ առ քայլ զարգացնելով իր այս դրույթը, Մառը ցույց տվեց, որ սոցիալական միջավայրը դասային հարաբերությունները և դասակարգային սուր հակամարտությունները հանդիսացել են այն հիմնաքարը, որոնք վերջիվերջո պայմանավորել են ոչ միայն երկրի զարգացումը, այլև նրա կուլտուրան, արվեստը, դրականությունը, ճարտարապետությունը և այլն։

Ն. Յա. Մառը առաջինն էր, որ դուրս եկավ հայկական միտումնավոր պատմագրության այն վտանգավոր կոնցեպցիայի դեմ, որ իբր քաղաքները կառուցել են ֆեոդալները և մեծ իշխանները և ցույց տվեց, որ նրանց առաջացումն ու զարգացումը ավելի բարդ պրոցեսի արդյունք է, քան պատկերացրել են հայ տրադիցիոն պատմագրության ներկայացուցիչները։

Ինչպես միջնադարյան Եվրոպայում, Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում, քաղաքների առաջացումն ու զարգացումն ընթացել է միևնույն ուղիներով։ Քաղաքների, արհեստային արտադրության, առևտրի, ֆեոդալական հասարակարգի վարչական և կուլտուրական կենտրոնների պատմությունը բարդ և երկարատև մի պատմություն է և ընդգրկում է պատմական հսկայական ժամանակաշրջան։ Քաղաքային կյանքի զարգացման առաջին շրջանում, ինչպես վկայում են մեր մատենագիրները, հանդես են գալիս գյուղաքաղաքներ, քաղաքատիպ ավաններ, քաղաքագյուղեր, որոնք ֆեոդալական հասարակարգի զարգացման զուգընթաց աճում ու դառնում են իսկական քաղաքներ։ Ավելորդ չենք համարում վկայակոչելու մեր մատենագիրների մի շարք տեղեկությունները և ցույց տալու քաղաքների աճման ու զարգացման այդ ուղին։

10—12-րդ դարերում հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքում տեղի էին ունենում աչքի ընկնող տեղաշարժեր ու փոփոխություններ։ Այդ ընթացաշրջանում արագ թափով աճում և բարգավաճում էին քաղաքները ու քաղաքային կյանքը, սրվում էին դասային և սոցիալական հակամարտությունները։ Բագրատունիների շրջանի պատմիչ Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկը) վկայում է, որ Աշոտ Ա-ի (887—890) և Սմբատ Ա-ի (890—913) օրոք Հայոց աշխարհը աճում ու բարգավաճում է։ «Իսկ Սմբատ թագաւորեալ՝ տիրէ բոլոր հայրենեաց իւրոց... ժառանգելով զքաղաքս հակառակորդաց իւրոց։ Յաւուրս սորա և յիշխանութեան հօր իւրոյ՝ էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց... Եւ այսպէս ազարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ...»։[2]

Հովհ. Դրասխանակերտցին նույնպես, ինչպես Ասողիկը, հիմնական տարբերություն է դնում ավանների, գյուղաքաղաքների, քաղաքագյալ ավանների և քաղաքների մեջ։ Աշտարակը, Աշտիշատը, Արմարունիքը, Դսղքը և տասնյակ այլ վայրեր նա կոչում է գյուղեր, իսկ Ավանը, Արուճը, Բաղարանը, Երազգավորքը, Երևանը, Կողբը, Մրենը, Քարունջը՝ քաղաքագյուղեր։[3]

Նույն պատմիչի վկայությամբ Թալինը, Գառնին կոչվում էին գյու-

---

[1] Н. Марр, „Ани" стр. 228.

[2] Ստեփանոս Տարոնացւոյ, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885 թ., էջ 161։

[3] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912 թ. էջ 57, 64, 104, 143, 162, 193, 194, 137, 207, 293, 333 և այլն։

ղաքաղաքներ։[1] Հաճախ պատմիչը գյուղաքաղաքը կոչում է նաև ավան։ Այսպես, օրինակ, Բաղարանը, նրա կարծիքով, ավան էր և «քաղաքագյուղ»։[2] Պատմիչը հաճախ դաստակերտը կոչում է և գյուղ և քաղաքագյուղ, Եղվարդը և գյուղ էր և դաստակերտ, իսկ Կողբը քաղաքագյուղ էր և դաստակերտ։[3] Նույն պատմիչի վկայությամբ Անին, Արտաշատը, Դվինը, Կարինը, Հունարակերտը, Մելիտինեն, Նախճավանը, Սեբաստիան, Վաղարշապատը, Վանը, Տիգրոնը, Փայտակարանը արդեն դարդացած քաղաքներ էին։[4]

Սեբեոսը հիշատակում է, որ Հայաստանում կային հազարավոր գյուղեր, ավաններ, գյուղաքաղաքներ, քաղաքագյուղեր և քաղաքներ։ Նրա կարծիքով Խոռխոռը, Կողբը գյուղաքաղաքներ էին, իսկ Եղվարդը, Մրենը քաղաքագյուղեր, Ամիդը, Արտաշատը, Գանձակը, Դվինը, Անդեղը, Կարինը և ուրիշները արդեն քաղաքներ էին։[5]

Նույնիսկ 13-րդ դարի մեր պատմիչներ Կիրակոս Գանձակեցին և Ստեփանոս Օրբելյանը խիստ տարբերություն են դնում գյուղաքաղաքների, ավանների, դաստակերտների, քաղաքագյուղերի և քաղաքների միջև։

Քաղաքների և քաղաքատիպ վայրերի կառուցումը տաժանակիր աշխատանք էր և կատարվում էր հարկադրաբար։ Բարձրբերդցու վկայությամբ Հուլավու խանը խորհում է կառուցել քաղաք, որի համար նա «... խորհեցաւ շինել քաղաք, յորմէ պատճառէ տառապեցաւ երկիր՝ մարդ և անասուն փայտս ծանունս ի հեռաստանէ բերելով»։[6]

Այդ նույն վկայությունը մենք գտնում ենք նաև Կիրակոս Գանձակեցու մոտ. «Յաւուրս յայսոսիկ սկսաւ մեծն Հուլաւու շինել քաղաք բազմատար և բազմամարդ ի դաշտին Դառնոյ. և եղ հարկս ի վերայ ամենայն հնադանդելոցն բազմութիւն փայտից բերեալ յամենայն կողմանց ի պէտս շինուածոյ տանց և ապարանից քաղաքին... Դանդի լուծս հարիւր եզանց լծէին ի փայտ մի յամենայն կողմանաց և ոչ կարէին շարժել վասն մեծութեան և հաստատութեան փայտիցն և զժուար ճանապարհանցն ընդ դետս և ընդ լերինս, եւ յանխնայ հարկանելով մահանէին մարդիկ և յանասունքն»։[8]

Քաղաքը ոչ միայն կառուցվում էր տաժանակիր աշխատանքի հետևանքով, այլև վաշխով, քրտինքով և արյամբ։ Արիստակես Լաստիվերտցին հետևյալ բառերով է նկարագրում Անիի իշխող դասերի ցոփ ու այլասերված կյանքը. «Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նմա զսրբելոցն տոչորեցաւ բարձրաշէն և զեղեցկայարմար աւյարանքն... Եւ վաշխն և նենգութիւնն որ ի նմա՝ խափանեցաւ։ Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շի-

[1] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1812., էջ 107, 110, 339։

[2] Նույն տեղում, էջ 73, 143, 194, 225, 340։

[3] Նույն տեղում, էջ 65, 91, 95։

[4] Նույն տեղում, էջ 73—78, 186, 214, 231, 308, 331 և այլն։

[5] Սեբէոս, Պատմութիւն ի Հերակլն, Թիֆ. 1912 թ., էջ 36, 104, 116, 120, 122, 163, 288, 273, 274, 147, 289, 311 և 308։

[6] Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանդին Սիսական, Թիֆլիս 1911 թ., էջ՝ 49, 177, 180, 181, հմմտ. Կ. Գանձակեցի «Պատմութիւն Հայոց», էջ 21, 60, 73, 76, 172, 186, 212, 217, 335 և այլք։

[7] Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861 թ., էջ 199։

[8] Կ. Գանձակեցի, նույն տեղում, էջ 380—381։

նեն զինքեանս արեամբ օտարաց, և ի քրտնաց տնանկաց փարթամութեան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն, և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ աղքատս և տնանկս՝ միայն հեշտութեան փափկութեան սպասենն...»[1]

Հասարակական հարկադիր աշխատանքը ֆեոդալական հասարակության բնորոշ և առանձնահատուկ գծերից մեկն էր։ «Հասարակական աշխատանքի ճորտատիրական կազմակերպությունը, — գրում է Լենինը, — խարխափում էր բոնի կարգադրության վրա, մի բուռն կալվածատերերի կողմից կողոպտվող և ծաղր ու ծանակի ենթարկվող աշխատավորների ծայրահեղ տգիտության և խեղճության պայմաններում»։[2]

Այսպիսով, հայկական քաղաքների զարգացման պատմությունը անցել է այն էտապներով, ինչ մյուս երկրների քաղաքները։ Սկզբնական շրջանում նրանք եղել են բերդ-ամրոցներ, իսկ հետագայում արտադրողական ուժերի բուռն վերելքի շրջանում վեր են ածվել իսկական քաղաքների։

* * *

Ն. Մառի կարծիքով միջնադարյան հայկական քաղաքները բաղկացած էին երեք հիմնական մասերից. ա) միջնաբերդ, բ) շահիրիստան կամ շահաստան և գ) բաց քաղաք։

ա) Միջնաբերդը։ 1907—1908 թ. թ. ընթացքում Ն. Մառը պեղում է Անի քաղաքի միջնաբերդը։ Միջնաբերդի պեղումները Մառին հանգեցրին այն եզրակացության, որ այնտեղ ապրում էր թագավորը, նրա արքունիքը, արքունական դրուժինան, թագավորազուններն ու իշխանազունները։ Այդ նույն կարծիքը պաշտպանում են Թ. Թորամանյանը և Հ. Օրբելին։

«Իազրատունիների թագավորության համար,—գրում է ճարտարապետ Թ. Թորամանյանը,—բավական չէր միայն միջնաբերդի փոքր տարածությունը, այնտեղ հաղիվ բնակություն կուտար արքայական ընտանիքին. անշուշտ արքունի ընտանիքի հետ անմիջական կապ չունեցող թագավորազունները և իշխանազունները միջնաբերդի պարիսպներեն դուրս բնակություն հաստատեր էին»։[3]

Ինչպես միջնաբերդը, այնպես էլ բուն քաղաքը, շրջապատված էին պարիսպներով։ Ահա մի երկու վկայություն. Սեբեոսը վկայում է, որ երբ 640 թվին արաբները առաջին անգամ արշավեցին և ավերեցին Դվին քաղաքը, «ի բերդն ժողովեցին զամենայն մարդիկ աշխարհին՝ որ եկեալ էին ի կութս ազնստանինն»։[4]

Ար. Լատիվերտցին, նկարագրելով Անի քաղաքի վրա սելջուկ-թուրքերի կատարած արշավանքները, գրում է. «Եւ ի սոյն ամի եկին Պարսից զօրքն յանուն Սուլտանայ, բայց ասեն թէ Ապուսուարայ էին. այն որ զԴվին և զԴանձակ ունէր, և էր փեսայ թագաւորին Հայոց Աշոտայ, որք

[1] Ար. Լատիվերտցի, Պատմութիւն, Վենետիկ, 1844 թ., էջ 111։

[2] Ленин, Собр. соч., изд. 3-е, т. XXIV, стр. 336.

[3] Թ. Թորամանյան, Անի քաղաք թէ ամրոց, էջ 65, հմմտ. Հ. Օրբելի—Անւոյ աւերակները։

[4] Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի հերակլն, Թիֆլիս, 1912 թ., էջ 175։

ելեալ էին յաշխարհն Հայոց։ Յորոյ հինէ մարդարնակ տեղիքն փախուցեալ ի քաղաքն Անի ժողովեցան, և ոչ ժամանել ամենեցուն ի ներքս մտանել, քանզի երեկոյայաւ ժամն և ածին զդրունս քաղաքինն։[1] Կ. Դանձակեցին, նկարագրելով Կարին քաղաքի գրավումը մոնղոլ-թաթարների կողմից, վկայում է, որ Կարինը նույնպես ուներ իր միջնարերդը, որտեղ «... յոյժ բաղում ամրոցի էր ի ժամանակին յայնմիկ, քաղաքն, լցեալ քրիստոնէիւք և տաճկօք, այլ և ամենայն զաւառն անդր հաւաքեալ էր։[2]

Միջնադարյան քաղաքը ոչ միայն ուներ միջնարերդ, այլև շրջապատված էր պարիսպներով, փոսերով, ուներ աշտարակներ և դարպասներ։ Մաղը Անիի պեղումների հետևանքով հայտնաբերել է քաղաքի ութսուն աշտարակ, որոնցից հիսունհինգը դասավորված են եղել երկշարք։ Այդ ութսուն աշտարակների մեջ նա չի հաշվել սուրբ Գրիգոր վանքի չորս, միջնարերդի չորս և Աշոտի կողմից հին Անիում կառուցված վեց աշտարակները։ Այսպիսով, Անի քաղաքը ունեցել է 94 աշտարակ։ Աշտարակներ ունեն Հայաստանի նաև մյուս քաղաքները։ Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 4542 ձեռագրում Կարին քաղաքը նկարագրվում է հետևյալ կերպ. Կարինը ... «շրջափակեալ իսր փոսիւ անդնդալիր հաստատոց զհիմունս պարիսպին անտաշ վիմօք խորագունս կրօվ զերեսս անդնդոց փակեաց. և ի վերայ բարձրարերձ աշտարակս ահագինս շինեաց... զի թէ զայցեն թշնամիք և նեղեսցն զդաղաքն և մուտ և ել ոչ տան առնել...»։[3] Քաղաքի մեջտեղում, ձեռագրի հեղինակի վկայությամբ, բարձրանում էին «ապարանք և աշտարակք զեղեցկաշէնք և զրունք քաղաքին բարձրասէմ և լայնանիստ և կատարեալ պարսպաւ վայելոջս և բուրքնս։[4]

Միջնարերդեր, պարիսպներ, աշտարակներ, դարպասներ ունեին նաև փոքրասիական քաղաքների մեծ մասը։ Վ. Գորդլևսկին իր „Государство селджуков Малой Азии“ աշխատության մեջ՝ վկայակոչելով արաբական պատմիչներին, հետևյալ կերպ է նկարագրում փոքրասիական քաղաքները. «Փոքրասիական քաղաքները հատուկ պատնեշներով բաժանված էին շրջակայքի բնակավայրերից։ Քաղաքները ունեին առանձին դարպասներ, որոնք սովորաբար փակվում էին երեկոները և արտաքին վտանգների ժամանակ։ Քաղաքների դարպասները փակվելուց հետո, արգելվում էր ելքն ու մուտքը։ Նույնիսկ հեռավոր ճանապարհորդները ստիպված դիշերում էին քաղաքի պարիսպների տակ՝ քաղաքից դուրս։ Օտար երկրներից ու քաղաքներից եկած քաղաքացիներին քաղաք էին թողնում բաղմակողմանի ստուգումից հետո։ Քաղաքի վարչության ոստիկանական մասի գլխավորը, յուրաքանչյուր առավոտ, պարտադիր կերպով իր թիկնապահների հետ միասին դուրս էր գալիս քաղաքից, ստուգում էր նրա շրջակայքը, որից հետո միայն քաղաքացիները սկսում էին իրենց առօրյա կյանքը։ Այսպես է նկարագրում սելջուկների քաղաքները Որն ի Բատուտանդ։[5]

---

[1] Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Վենետիկ, 1844 թ., էջ 73։

[2] Կ. Դանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1910 թ., էջ 264։

[3] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, ձեռագիր № 4542, էջ 2ա, 3բ։

[4] Նույն տեղում, էջ 3բ, 4ա։

[5] Гордлевский В., Государство селджуков Малой Азии, Ленинград, 1941 г., стр. 124.

Ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլդը իր „Историко-географический обзор Ирана“ աշխատության մեջ, անդրադառնալով պարսկական և միջին ասիական քաղաքների պատմությանը, գրում է. «Պարսկաստանի և Միջին ասիայի քաղաքները բաղկացած էին երեք մասերից՝ կուխենդուզից (միջնաբերդ), շահիրիստանից և ռաբադայից (արվարձան)։ Կուխենդուզը սովորաբար գտնվում էր քաղաքի կենտրոնական մասում։ Շահիրիստանում գտնվում էին կենտրոնական շուկան, խանությունները, արհեստանոցները և պահեստները, իսկ շահիրիստանից դուրս գտնվում էր նրա արվարձանը— ռաբադան, որտեղ ապրում էին գյուղացիներն ու արհեստավորները»։[1]

Ինչպես փոքրասիական, այնպես էլ միջինասիական, պարսկական, ռուսական, եվրոպական և հայկական միջնադարյան քաղաքները իրենց ծագման առաջին էտապում ամենից առաջ հանդիսանում էին բերդ ամրոցներ բառիս լայն իմաստով։

«Շատ հետազոտողներ միջնադարյան Եվրոպայի քաղաքների առանձնահատկությունը համարում են նրանցում գոյություն ունեցող ամրոցները։ Քաղաքը առաջին հերթին ամրացված վայր է։ Որ այդպիսի նշանակություն է ունեցել ռուսական «քաղաք» տերմինը, այդ է ապացույց այն, որ հաճախակի նա գործածվել է ամրոց, բերդ նշանակությամբ... Ակադեմիկոս Ն. Ս. Դերժավինը սլավոնական լեզուներում մասնացույց է անում ռուսական «քաղաք» տերմինի հետևյալ զուգահեռը։ «Ժամանակակից չեխական լեզվում hrad տերմինը պահպանվել է իր նախնական նշանակությամբ «ամրոց»։ Այդ նշանակությամբ «քաղաք» տերմինը պահպանվել է լեհական լեզվում որպես grad իսկ ավելի փոքր նշանակություն ունեցող ամրոցը կոչվել է gradek... Նույնիսկ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Մոսկվայի կենտրոնական մասը, այսինքն Կրեմլը և Կիտայ-գորոդը ժողովրդական բառապաշարում նշանակում էր «քաղաք»։ «Քաղաք» գնալ, նշանակում էր ուղևորվել Կիտայ-գորոդ»։[3]

Այդ նույն իմաստով քաղաք բառը գործածվել է նաև մեզ մոտ։ «Քաղաք» բառը,—իր նախնական նշանակությամբ, կոչվել է ամրոց, բերդ, ամրություն... Հետաքրքրական է, որ քաղաքների մայրը կամ մեծ քաղաքը ուներ փոքր քաղաք-ական, որ կոչվում էր նրա դուստրը»։[3]

Դարագաշյանը, վկայակոչելով Սեբեոսին Տիգրանակերտի մասին, գրում է. որ «Ղուկուղոսը (Լուկուլլոսը) հրաման տուաւ բնակչաց Տիգրանակերտի գառնալ ի քաղաքս ծննդեան իւրեանց և այսպէս խափանեցաւ նոր մայրաքաղաքն, որ կիսով չափ միայն շինուած էր և եղև դիւղ աննշանն»...[4]

Քաղաք-ամրոցների և ամրացած բերդերի թիվը շատ մեծ էր Հայաստանում։ 10-րդ դարի արաբական աշխարհագիր Իբն-ալ-Ֆակինը իր «Երեք երկրների մասին» աշխատության մեջ նշում է, որ միայն Արաքսի հովտում կար մոտ հազար գյուղ և քաղաք։[5] Արաբական աշխարհագիր Յակու-

[1] Бартольд В. В.—Историко-географический обзор Ирана, СПб., 1903 г. стр. 8, 9, 29, 35.

[2] Проф. Тихомиров М. Н.—„Древнерусские города“ (см. Ученые записки МГУ, Москва, 1946 г., вып. 99, стр. 226, 227).

[3] Հ. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հ. Զ, էջ՝ 1353—1355։

[4] Գարագաշյան Ա. Մ.—«Քննական պատմություն հայոց», Թիֆլիս, 1893 թ. հ. I, էջ 194։

[5] Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербейджане. Составил Каралов Н. А. Вып. XXXI, 1909 г., стр. 29.

տը իր «Աշխարհագրական բառարանում» վկայակոչելով Իբն-ալ-Ֆակիհի վերոհիշյալ աշխատությունը, նշում է, որ Հայաստանում կային 18 հազարից ավելի գյուղեր և քաղաքներ։[1]

Հասկանալի է, որ մատնանշված այդ բազմաթիվ քաղաքները դեռ չէին աճել ու վերածվել իսկական քաղաքների ժամանակակից իմաստով, այլ նրանց մեծ մասը հանդիսանում էին ամրոց բերդեր, գյուղաքաղաքներ, քաղաքագյուղեր և քաղաքացյալ ավաններ։ Աշխատանքի հասարակական բաժանման հետևանքով վերոհիշյալ քաղաք-ամրոցները և քաղաքատիպ վայրերը միայն X—XIII-րդ դարերում աճեցին ու վերածվեցին իսկական քաղաքների։ Միջնադարյան հայկական քաղաքները հանդիսացան առևտրի ու արհեստային արտադրության կենտրոնները և նրանց կից առաջացան ու ձևավորվեցին շահրիստանները։

բ) Շահրիստան կամ շահաստան։ Քաղաքային կյանքի բուռն վերելքը նպաստեց շահրիստանի կամ բուն քաղաքի զարգացմանը, որտեղ սովորաբար գտնվում էին մայր եկեղեցին, կենտրոնական շուկան, արհեստային արտադրության ձեռնարկությունները ու արհեստանոցները, խանութները ու կրպակները, հյուրանոցները ու քարվանսարաները, իրանապանները ու պահեստները։ Ինչպես միջնաբերդերը, այնպես էլ շահրիստանները շրջապատված էին բարձր պարիսպներով, ունեին իրենց դարպասները, խրամատները, աշտարակները։ Սովորաբար շահրիստանում բնակություն էին հաստատում առևտրա-արհեստային դասերը և քաղաքի բնակչության հիմնական մասը։ Շահրիստան ուներ ոչ միայն Անին, այլև Հայաստանի մյուս քաղաքները։ Ա. Լաստիվերտցին, տալով Մելիտինե քաղաքի պատմությունը, գրում է. «Կործանումը Մելիտինոյ շահասաան քաղաքիս»[2] կամ «Եթէ հրամայեալ է քեզ թագաւորն տեղի բնակութեան ի Կարին գաւառին յԱրծին աւանի։ Եւ ելեալ հայրապետին գայ ի մեծանիստ և ի շահաստան քաղաքիս մերս...»[3] Արծն քաղաքը նույն պատմիչը կոչում է «բազմամբոխ նշանաւոր բոլոր քաղաքներից մեծանիստ և շահաստան»։[4]

Ձ 4542 ձեռագրի հեղինակը, նկարագրելով Կարինը, գրում է. «Ի մէջ քաղաքին ապարանք և աշտարակք գեղեցկաշէն և սրբազործս, փողոցք և հրապարակք, սպանդանոցք և վաճառանոցք սրբատեսիլ, եկեղեցիք բազումք և գմբեթահարկք և հրաշալիք տեսնողացն. ի մէջ քաղաքին ի բարձրաւանդակին վայր մթերանոց, բազմատեսակ շինողեաց», որտեղ նույն հեղինակի վկայությամբ ապրում էին «մեծատունք և աղքատք»։[5] Թովմա Արծրունին՝ տալով Աշոտ Բագրատունու հերոսական պայքարի պատմությունը արաբների դեմ, գրում է. «Եւ ոչ ոք գտանէր ամենեքին ի կողմանէ թշնամեացն, որ կարէր կալ ընդդեմ նոցա, և ոչ մի ոք. այլ մնացեալքն ի սրոյն փախստական էին յամուրս մայրեացն։ Եւ կէսքն հասանէին մինչև ի շահաստան Բաղէշ, թողեալ անդէն զրուն բանակն»։[6]

---

[1] Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербейджане. Составил Караулов Н. А. Вып. XXXI, 1909 г. стр. 29.

[2] Ա. Լաստիվերտցի, «Պատմութիւն», էջ 80։

[3] Նույն տեղում, էջ 43։

[4] Նույն տեղում, էջ 53։

[5] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, ձեռագիր № 4542, էջ 3։

[6] Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն տանն Արծրունեաց երբուրոս, 1887 թ., էջ 110։

Թովմա Արծրունին՝ խոսելով մեծ երկրաշարժի մասին, որ հսկայական ֆաս հասցրեց Արարատյան դաշտին, մատնանշում է, որ երկրաշարժից տուժեց «... շահաստանն Դուին, մարդախիտ պարոպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրևաոիկ վաճառականութեամբ և աղդի աղդի պղծութեամբ յափրացեալ յդփացեալ դնա ի հիմանց տապալեալ»[1]

Այդ կարդի բաղմաթիվ վկայություններ կան նաև մեր մյուս մատենագիրների մոտ։ Այսպես, օրինակ, Ղազար Փարպեցին շահրիստան է կոչում Իռնավեժը, Նուշապուհը և այլն։

գ) Բաց քաղաք։ Բաց քաղաքը միջնադարյան քաղաքի այն մասն էր, որտեղ բնակություն էին հաստատում դյուղացիները և երկրագործության հետ կապված արհեստավորական դասերը։ Ինչպես Անին, այնպես էլ Հայաստանի բոլոր քաղաքները, շրջապատված էին մարդաղետիններով, այգիներով, մշակելի հողերով, դյուղերով, արոտավայրերով, դաշտերով։ Անիի բնակիչները քաղաքից դուրս ունեին իրենց սեփական տնտեսությունը «Ամբողջ հարթավայրը,—գրում է Թորամանյանը,—շնորհիվ խրամատները լցնելու համար այնտեղ անցնող վտակների պարգևած առատ ջրերուն, ծածկված է եղել ծառաստաններով և մրգաստաններով... Նույնիսկ այնտեղ կարելի էր դանդաղանել անհատական սեփականություններ՝ իրենց բնակարաններով, պարիսպներով, եկեղեցիներով և գերեզմանոցներով»[3] Հողամշակությունը ավելի ինտենսիվ դարձնելու համար Անիի աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները քաղաքն ու նրա շրջապատը ծածկել էին բաղմաթիվ ջրանցքներով և առուներով, անցկացրել էին նույնիսկ ջրատար խողովակներ։

Միայն վիմական տարեգրություններում հիշատակվում են ջրանցքներ անցկացնելու 15 դեպք։ Դյուղատնտեսությունը քաղաքի շրջակայքում այնքան զարգացած է եղել, որ աշխարհիկ ֆեոդալները վանքերին ու եկեղեցիներին, ըստ վիմական տարեգրությունների վկայության, նվիրել են 186 գանձագին երկիր, հայրենիք, վիճակ, ագարակ, քաղաքագյուղ, գյուղաքաղաք, սեփական վիճակ, 132 այգի և պարտեղ, 48 ջրաղաց։

Միջնադարյան քաղաքները շրջապատված են եղել գյուղերով և ավաններով, այդ մասին մենք արժանահավատ վկայություններ ենք գտնում ոչ միայն վիմագիր արձանագրություններում, այլև մեր մատենագիրների ու ձեռագիր աղբյուրների մեջ։ Այսպես, օրինակ, Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ, Անի քաղաքն ուներ իր սեփական գյուղերն ու ագարակները. նույն պատմիչի վկայությամբ սելջուկ-թուրքերը ոչ միայն պաշարեցին Անին, այլև «որ շուրջ դնովաւ գիւղք և ագարակք»[4]

№ 4542 ձեռագրի հեղինակը հետևյալ կերպ է նկարագրում միջնադարյան հայկական քաղաքը. «Քաղաք որ բարձր է քան զամենայն երկիր և ունի իր թուական գաւառք և աւանք, բերդաբայք ի Դ կողմունսն. և իշխող է իշխան սորա բաղում տեղաց... բաղում գիւղք և գաւառք, այգեստանօք և մրգաւետ ծառօք զարդարեալ է... ունի և գլուխս լերանցն եայ-

[1] Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1887 թ., էջ 230։

[2] Ղ. Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1904, էջ 86, 121 և ուր.։

[3] Թ. Թորամանյան, «Անի քաղաք թէ ամրոց», էջ 69։

[4] Ար. Լաստիվերտցի, էջ 84։

լանէը յոյժ խոտաւէտ և ջրարուխ, որք բաղում հոաք ոչխարայ և անասնաց ճարակորեալ լինիր»[1]

Արդյոք տնտեսական, քաղաքական և իրավական ինչպիսի հարաբերություններ կային քաղաքների և նրանց շրջապատող գյուղերի, ավանների, աղարակների մեջ, այդ հարցը կարոտ է հատուկ ուսումնասիրության։ Սակայն մեզ թվում է, որ այդ բազմաթիվ գյուղերն ու ավանները, աղարակները սպասարկում էին ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր ֆեոդալների ու քաղաքի վերնախավի սպառողական բոլոր կարիքները։ Գյուղերում բնակություն հաստատած բնակչությունը տնտեսական և իրավական կախման մեջ էր գտնվում ոչ միայն ֆեոդալից, վանքերից ու եկեղեցիներից, այլև քաղաքային ավագանուց։ Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին պատկանող «հայրենական», «գանձագին» գյուղերի և ավանների բնակիչները իրենց իրավական կացությամբ հանդիսանում էին ճորտ գյուղացիներ։ Այդ նույն կարծիքն է հայտնել ակադեմիկոս Ն. Մառը։ «Խիստ բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում,—գրում է Մառը,—1904 թ. պեղումները։ Նրանք հարց հարուցեցին չքավոր բնակչության բնակարանների մասին և, ինչպես երևում է, նա սեփականատիրական իրավունք չի ունեցել»։[2]

Այդ նույն գրությամբ Մառը ավելի պարզ ու որոշակի կերպով զարգացնում է Անիի հետագա պեղումների ժամանակ։ «Այդ «հայկական տան» բանվոր որդիները, այդ թվում և գյուղական բնակչությունը,—գրում է նա,—չուներ սեփական ոչինչ իրական, որի պաշտպանության համար նա պետք է որ դուրս գար օտար գեռ անհայտ գերիշխանության դեմ»։[3]

Քաղաքային կյանքի, վաշխառուական կապիտալի, ֆեոդալական, վանական և եկեղեցական խոշոր հողատիրության զարգացման հետևանքով քաղաքներում և նրա շրջակայքում բնակություն հաստատող բնակիչները աստիճանաբար դուրս էին քշվում քաղաքների պարիսպներից և բնակություն էին հաստատում քարայրներում «քարատներում» ու ողորմելի գյուղերում։

Մառի մեծությունը ոչ միայն այն էր, որ նա գիտական հիմքերի վրա դրեց քաղաքի ծագման ու առաջացման պատմությունը, այլև այն, որ նա լայն կտավի վրա հանեց քաղաքային դասերի և դասային ու սոցիալական հարաբերությունների պատմությունը։

* * *

Ն. Մառը ուսումնասիրելով հայկական քաղաքների պատմությունը, հանգեց այն եզրակացության, որ միջնադարյան հայկական քաղաքներում բնակություն էին հաստատել հետևյալ դասերը.

ա) թագավորը և խոշոր իշխանները, բ) հոգևորականությունը, գ) առևտրական-վաշխառուական դասը, դ) գյուղացիությունը, ե) արհեստավորները և զ) այլ բնակիչներ։

Քաղաքը, մեծ գիտնականի կարծիքով, սկզբնական շրջանում հանդիսացել է թագավորների և իշխող դասերի սեփականությունը։ Նա ցույց

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, ձեռագիր № 4542, էջ 5, 13։
[2] Н. Марр. „Ани“ стр. 99.
[3] Н. Марр. „Ани“, стр. 53.

տվեց, որ աշխատավոր ժողովրդի անօրինակ շահագործման հետևանքով, ինչպես սեփական, այնպես էլ օտար իշխող դասերը պատմական այս էպոխայում կուտակել էին զրամական հսկայական հարստություն և այդ միջոցներով դնում ու վաճառում էին ոչ միայն գյուղեր, այգիներ, կալվածքներ, այլև ամբողջ քաղաքներ։ «Առաջին անգամ,—գրում է Մառը,—մենք հանդիպում ենք Բագրատունիներին, որոնք Անին դնում են Կամսարականներից իր բոլոր տիրություններով հանգերձ։ Երկրորդ անգամ մենք հանդիպում ենք Անիի գնող Աբու-լ-Սուվարին։ Շիրակի գավառի պատմության մեջ Անիի անցումը նոր տերերին, ուներ սոցիալական մեծ նշանակություն։ Բագրատունիները փոդի միջոցով ձեռք էին բերում զրամական հսկայական արիություն։ Մեզ անհրաժեշտ է իմանալ, թե ինչ ուղիներով են կուտակվում փոդային միջոցները այն ժամանակվա եռանդուն մարդկանց ձեռքը... Այդ միջոցները կալվածքներից ստացած եկամտի կողքին հանդիսանում էր նաև առևտուրը»։[1]

Անդրադառնալով Անիի երկրորդ անգամվա վաճառքին,—մեծ գիտնականը շարունակում է. «Գնելով Անին, Աբու-լ-Սուվարը այն նվիրում է իր տղա Մանուչեին։ Այս դեպքում մեզ համար հսկայական հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ Շեդադյանները ոչ թե նվաճում, այլ գնում են Անին... Շեդադյանները ոչ միայն ռազմիկներ էին, այլև վաճառականներ»։[2]

Մառը այս երկու ուշագրավ փաստերի հիման վրա հանգում է այն եզրակացության, որ արդեն Հայաստանում հանդես են գալիս սոցիալական այն նոր խավը, առևտրա-վաշխառուական դասեր, որոնք Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքում խաղում էին արդեն կարևոր ու վճռական դեր։

«Ակնհայտ է,—եզրափակում է Մառը,—որ տեղի էր ունենում իշխանական և աղնվական կալվածքների անցումը խոշոր կապիտալիստների ձեռքը, որի հետ, եթե մրցում էր որևէ մեկ դաս, ապա բացառապես այդ հոգևոր դասն էր»։[3]

Առևտրա-վաշխառուական դասի անտեսական հզորության և քաղաքական դերի մասին մեզ արժանահավատ վկայություններ են տալիս ոչ միայն հնագիտական պեղումները, աղդային մատենագիրները, այլև վիմական տարեդրությունները։ Վիմական տարեդրությունների վկայությունների համաձայն 10—13-րդ դարերում նոր բարձրացող առևտրա-վաշխառուական դասը և այդ ոլորտում ներառված աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները իրենց «սեփական» միջոցներով կառուցում, վերանորոգում և զարդարում են ոսկով, արծաթով և թանկագին քարերով՝ 92 եկեղեցի և վանք, կառուցում են 28 ջրագաց, նվիրաբերում են երեք քաղաք, մեկ ամբողջական գավառ, չորս շրջան, «հոգու փրկության համար» վանքերին ու եկեղեցիներին նվիրում են 186 գանձագին երկիր, հայրենիք, 132 այգի, 19 հազար 217 կարմիր դուկատ, դրամ սպիտակ, 62 գաչտ, հեծան, խաչարք և արոտավայր, 70 կրպակ, 3 հյուրանոց, 1 ձկնորսարան, հազարա-

[1] H. Марр. „Ани", стр. 41.
[2] Նույն տեղում, էջ 59—60։
[3] Նույն տեղում, էջ 65։

վոր կենդանիներ, 36 ջրաղաց, 10 ձիթահան, 9 կամուրջ, հիշատակվում է ոսկու, արծաթի և թանկագին քարերի նվիրման 71 դեպք, մեկ բաղնիք, 44 տուն և դղյակ և այլն և այլն։

Հասկանալի է, որ այս նվիրաբերությունները ամբողջական և լրիվ չեն։ Հաղարավոր նվիրաբերություններ կամ չեն արձանագրվել կամ թե արձանագրվել են և անհայտ կորել և մեզ չեն հասել։ Հարստության կուտակումը հայ աշխարհիկ հոգևոր ֆեոդալների և առևտրա-վաշխառուական դասի ձեռքում մասսայական երևույթ է միջնադարյան Հայաստանում։ Հայ առևտրական-վաշխառուական դասի կարկառուն ներկայացուցիչ Տիգրան Հոնենցը 1215 թվականին Անիի թողած իր արձանագրության մեջ թվարկում է այն հսկայական «նվերները», որ նա տալիս է իր կողմից կառուցված ս. Գրիգոր վանքին։ Ավելորդ չենք համարում այդ վկայությունը բերել ամբողջապես։

«...Ես Տիգրան... որդի Ամբատաւրենց Սուլեմա յազգէ Հոնենցի... շինեցի զվանքս սուրբ Գրիգորեայ... Իմ հալալ գանձով գնեցի... և պարըսպեցի... և զարդարեցի բազում զարդիւք... և պատկերագործ խատերով զարդարեալ ոսկով և արծաթով և ակամբք և մարգարտաւ և կանթեղաւք ոսկի և արծաթի... Եւ բազում զարդաւք, շինեցի զամենայն ցեղ դրնակարան վանականաց և իշխանաց, և կարգեցի ի սմայ քահանայք և ետու հայրենիք... Գաւառխոնեց զեղին կէսն, Բարտին Ե. դանգն, Մշակունեց կէսն, Կապղուցն կէսն, Յամաքծոփն բոլոր, Խուզան Մահմունդի ի Կարուց յերկիրն, Ուցնդոյ (ու Յընգոյ) Ը դանգն, Խաչորկանն, և փնդուկն ի քաղաքիս, հայրենիք բաղնիսն ու միլն ի մոդանիս. խանապարն կուղպակնոփն ու կամարակապ փնդուկն ու մարագն հետ բազնեցն, տէր Սարդսի ախոռն ու մարագն, զոր գնեցի կալն. և երկու ակն ձիթահանքն և ալոռնի և մարաղնի վանիցս ի դռանս վանիցս առջև պահէզն ու լանջն ինչուրվի Գալիձորի դուռն, ինչվի գետն ու Գետեզերն պահէզն, զոր գնել էի և շինել ի Դվնաղռանն, կէս ակն ջաղաց, Թարի մի բոլոր, ու մին այլ Թարփին շար բ աւր, Գալիձորին ջաղաց... Պապենց խանաբարն չորս դանգն ու դռան կուղպակն, բոլոր աներ Հատեցոնց զուկակի, քաղաքիս դրռանս բազում հողեր գնած, այդի Ա յԵրևան, այգի Ա յՈշական, այդի Ա Կոշ, էգի Ա յԱրուճ... Այգի Ա ի Մրեն, այգի Ա ի Ծմակին... և այլ բազում գրաւկընած էր, զոր ոչ արձանագրեցի, վանացս էի տվել»։[1]

Տիգրան Հոնենցը իր արձանագրության մեջ նշում է, որ նվիրել է բազմաթիվ նվերներ, որոնք չեն արձանագրված։ Սակայն Տիգրան Հոնենցը միակը չէր։ Դրամական հսկայական հարստություն էին կուտակել ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր ֆեոդալ առևտրական դասերը։

Մ. Ուռհայեցին իր «Ժամանակագրութիւն» աշխատության մեջ հիշատակում է, որ Ծուղրուլ սուլթանը հրամայում է իր զորավարներ Արբեիմին ու Դթլմուշին նվաճել «հռչակաւոր և բազմամրոխ քաղաքն Հայոց, որ կոչի Արծն»։ Արծում ապրում էր քորեպիսկոպոս Դավթուկն։

Աբրեհիմ և Դթլմուշ զորավարները բռնազրավում են ոչ միայն Դավթուկի հսկայական ոսկին ու արծաթը, այլև նրա շարժական կայքը. «Դանձաւունն նորա,— վկայում է Ուռհայեցին,— Աբրիհիմն էառ և քառասուն ուղտ

[1] Կոսեանյան Կ., «Վիմական տարեգիր», Պետերբուրգ, 1913 թ., էջ 58—59։

բարձան գանձատունն նորա, ուր հարիւր վեցկի եղնաց ելանէին ի տանն նորա»[1] Դավթուկը,—ինչպես վկայում է Ուռհայեցին,—ուներ քառասուն ուղտի բեռ ոսկի և արծաթ, իսկ նրա տանից դուրս էր գալիս 4800 եզ՝ դաշտային աշխատանքներ կատարելու համար։

Ահա այդ կարգի մի երկու վկայություններ ևս. Սոփի տիկինը Ռընդեվաղ վանքին նվիրում է «Զերկու գիւղս ի ժառանգութիւն»[2]

Արդեն պատմական այդ ժամանակաշրջանում առևտրի օրեկտ էին դարձել ոչ միայն գյուղերն ու այգիները, հողերն ու դաշտերը, այլև խանութները, նույնիսկ քաղաքներն ու գավառները։

Այս կարգի հսկայական հարստությունները ձեռք էին բերվում ոչ միայն ժառանգաբար, այլ և վաշխառության միջոցներով։

«...Եւ Տիթվասուն... և ամուսինն իմ Ռուսուղան,—կարդում ենք վիմական տարեգրություններում,—գնեցի իմ հալալ ընչիւքն Ուքանի որդեացէն Անագէթն, Մամխուտն, Բաղէնքն, Բերդկայ այդին... և Ճորթոլանց աունն և Աւէտն իւրեանց հայրենիքն գանձադին արարի, և ետու իմ սուրբ նշանիս ընծայ և այլ արդիւնքս առաջնորդ հայր Սիմէոնայ։[3]

Այս հարստության կուտակման գլխավոր աղբյուրը հանդիսանում էր ոչ միայն վաշխառությունը, այլ հայ ժողովրդի տնտեսական անօրինակ շահագործումը։ Ն. Մառը նկատի ունենալով հայ առևտրա-ֆեոդալական և հոգևոր դասերի այս հսկայական հարստությունը, գրում է. «Հայ աշխատավոր բնակչության տնտեսական շահագործման այս անտիթեղը և հարստության կուտակումը սակավաթիվ իշխող դասի ներկայացուցիչների ձեռքում՝ արտացոլում է ֆեոդալական բուն Հայաստանի կյանքը՝ հայ թագավորների Անիում իշխելու վերջին տարիներին և թուրքական ցեղերի ներխուժման նախօրյակին։[4]

Շարունակելով և զարգացնելով իր այս գրույթը, Մառը մի այլ կապակցությամբ գրում է. «Բավական է հիշատակել, ոչ այնքան անհայտ քորեպիսկոպոս Դավթուկի շարժական և անշարժ գույքը, որպեսզի պարզ կերպով պատկերացվի, թե ինչպիսի անհավատար հարստություն էր կուտակվել իշխող դասերի ձեռքը՝ հայ բնակչության շահագործման հետևանքով։[5]

Արտահայտելով աշխատավոր բնակչության քաղաքական շահերը, կանգնելով այդ շահերի պաշտպանության դիրքերում, ակադ. Մառը եզրափակում է. «Աշխատավոր բնակչությունը պասիվ չմնաց կյանքի այդ անօրինակ հակասության նկատմամբ։ Դաշի գյուղացիական շարժումներից, որոնց կյանքի էին կոչում հողային հարաբերությունները, Հայաստանում ծագեցին նաև իդեական-ժողովրդական հուզումներ, գիտակցորեն հակադրվելով պաշտոնական՝ քրիստոնեական «ժողովրդականությանը»։[6]

Մառը անարգանքի սյունին է գամում շահագործող դասերի, նրա քա-

---

1 Մատթէոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898 թ., էջ 103։

2 Գ. Կոստանյան, նույն տեղում, էջ 8։

3 Նույն տեղում, էջ 11։

4 Ն. Մառ, „Ани", էջ 55։

5 Նույն տեղում, էջ 56։

6 Նույն տեղում, էջ 58։

ղաքական իդեոլոգներին. Նա դուրս եկավ միտումնավոր պատմագրության այն դրույթի դեմ, որ իբր թե Բագրատունիների օրոք բոլոր դասերի համար ստեղծվել էր տնտեսական և քաղաքական զարգացման բարեկեցիկ պայմաններ։ «Շիրակում գոյություն ունեցող քաղաքական անկախության պայմաններում,—գրում է Մառը,—հայ աշխատավոր ժողովրդին բաժին էր ընկել միայն աշխատանք, նյութական զրկանքներ և հոգեկան գորշ կյանք, իսկ ավագանուն և հոգևորականությանը՝ երկրային բոլոր բարիքները։ Հոգևորականությունը բնակություն հաստատելով վանքերում, հանդիսանում էր խոշոր հողատեր դաս, ուներ իր անձնական դասային շահախնդրությունը՝ ֆեոդալների հետ հավասար պայմաններում»[1]

Հայ աշխատավոր բնակչության աշխատանքի միջոցներով իշխող դասերը կառուցում էին պալատ-դղյակներ, վարում էին զեխ ու ճոխ կյանք։ Անիում, որտեղ կային այնքան շատ մոնումենտալ կառուցումներ, որտեղ հայ ավանդության համաձայն կար հազար ու մի եկեղեցի, աշխատավոր մասսան, ինչպես ցույց են տվել քաղաքի պեղումները, ապրում էր ողորմելի հյուղերում, քարանձավներում։ Ն. Մառը Տիգրան Հոնենցի, Դավթուկի և ուրիշների օրինակի վրա ցույց տվեց, որ հայ առևտրական-վաշխառուական դասի ներկայացուցիչները ոչ միայն կուտակում էին հսկայական հարստություն, շարժական և անշարժ կայք, այլև ձգտում էին նաև քաղաքական իշխանության։

Անի քաղաքի շահագործող դասին ակադ. Մառը հակադրում է չարքաշ և մերկանդամ գյուղական բնակչությանը։ 1905 թվականին Անի քաղաքում կատարված դամբանների պեղումները հայտնաբերել են բազմաթիվ դեպքեր, երբ մեռածներին թաղել են բոլորովին մերկ։ «Այդ դամբանները, ասում է Մառը, ամենայն հավանականությամբ պատկանելիս են եղել ծայրահեղ չքավոր բնակչությանը»[2] Առևտրա-վաշխառության գործունեության, ֆեոդալական խոշոր հողատիրության զարգացման հետևանքով «հասարակ» բնակչությունը դուրս էր քշվում քաղաքի պարիսպներից և բնակություն էր հաստատում քաղաքից դուրս։ 1892—1913 թ. թ. ընթացքում ակադ. Ն. Մառը քայլ առ քայլ ուսումնասիրելով Անիի հնագիտական անցյալը, ուսումնասիրելով հայ իշխող դասերի պալատ-դղյակները, 4—8 սենյակներից բաղկացած բնակարանները, նրանց պատկանող պարտեզները, խանութները, բաղնիքները, հյուրանոցները, քարվանսարաները, արհեստանոցները, ցույց տվեց, որ այդ զեխության ու փարթամության մեջ հայ աշխատավոր ժողովուրդը վարում էր չարքաշ ու տառապյալ կյանք։[3]

Մառի այս դրույթից հետո մենք այլևս չենք կարող համաձայնել Ստեփանոս Տարոնացու և նրան վկայակոչող այն պատմաբանների հետ, որոնց կարծիքով Բագրատունիների օրոք, Հայաստանում տիրում էր խաղաղ ու անդորր կյանք և ժողովրդի նյութական պայմաններն այնքան էին աճել ու բարգավաճել, որ բոլորը իբր թե հագնում էին մետաքսյա հագուստներ և հանգստանում թզենու հովանու տակ։

Մառը իր ամբողջ մեծությամբ դուրս եկավ սոցիալական անարդա-

---

1 Ն. Մառ, „Ани", стр. 53—54.

2 Նույն տեղում, էջ 101, 105, 154, 171։

3 Նույն տեղում, էջ 126—127, 194—195 և ուրիշներ։

բության դեմ, կանգնեց դասակարգային պայքարի դիրքերում և պաշտպանեց աշխատավոր բնակչության դասային շահերը։

Մեր ազգային մատենագիրները մեզ թողել են բազմաթիվ վկայություններ այն մասին, թե ինչպիսի ծանր պայմաններում էր ապրում հայ աշխատավոր բնակչությունը։ Այսպես, օրինակ՝ 7-րդ դարի նշանավոր հեղինակ Հովհան Մայրավանեցին՝ խոսելով հայ առևտրական վաշխառուական դասի մասին, նշում է, որ այդ դասը անխիղճ կերպով ծծում էր շինականի արյունը, ցանքս չանելով բերք էր հավաքում, այն ժամանակ, երբ երկրագործ-մշակը առատություն, անձրև և լիություն էր ցանկանում, վաշխառուն երազում էր սովի, ագքատության, պատերազմի և հարաճուն շահույթի մասին։ Երբ մտածում ես, շաբունակում է Մայրավանեցին, աղքատի ու տնանկի մասին, երբ միտք ես բերում նրա տառապանքն ու վիշտը, երբ զգում ես, որ նա քո եղբայրն է և կարիք ունի այն ամենին, ինչ որ դու, մտածում ես, որ նա դաժան կարիքի ու սովի պատճառով թափառում է ամեն տեղ, երբ մտածում ես, որ նա տապից տոչորվում է, ցրտից դողում, որ նրա որովայնը դատարկ է և մարմինը մերկ, մազերը գզգզված, դեմքը թոշնած ու դեղնած, հոգիդ տառապում է ու ձեռքերդ դողում։[1]

Արիստակես Լաստիվերտցին նույնպես վկայում է, որ Կարսը քաղաք էր «յղփացեալ», որ իր հարստությունը կուտակել էր «բազում ընչեղութեամբ և ի ծովէ և ի ցամաքէ», նա քաղաք էր «ողբովք լի»։ Անին նա կոչում է «քաղաք անիրավ», որը կառուցված էր «արեամբ և վաշխից», նա մի քաղաք էր, որտեղ լի էր վաշխը ու նենգությունը։ Ոչ միայն Արիստակես Լաստիվերտցին, այլ և մյուս պատմիչները նկարագրել են Հայաստանի քաղաքների հղփացեալ կյանքը։ Այսպես, օրինակ՝ 18-րդ դարի հեղինակ Աբրահամ Կրետացին իր կրոնա-բարոյական քարոզներով ցանկանում էր ընթերցողին համոզել, որ Անի քաղաքի անկման պատճառը հանդիսացել է քաղաքացիների հակակրոնական և աշխարհիկ այլասեռված կյանքը։ Անին,— ասում է նա,— քաղաք էր մեծ և հռչակավոր։ Քաղաքի բնակիչները այնքան էին հպարտացել ու հղփացել, որ ոչ ոքի չէին հավանում, ոչ մեծերին, ոչ էլ փոքրերին, յուրաքանչյուրը մտածում էր իր մասին։ Բնակիչները նախանձում էին մեկը մյուսին, ձգտում էին պճնվել, զրավել ընկերոջ կայքը «ծուլութիւնն տիրեալ առ ամենեսին, եզրափակում է պատմիչը, զի առանց ազախնեայց և ծառայից ոչ լինէին. և հետիոտս յեկեղեցին ոչ ընթանային. ոմանք դրաստիւ, և այլք ի գրաստէ իջանել ոչ կամէին... Դնային ի թատերս, ի թէատրոնս, և ի ասպարէզս ձիարշաւանաց... Ագահութիւնն ևս քան զևս, և արմատ ամենայն չարեաց արծաթասիրութիւնն. զի այնպէս ագահ էին, մինչ զի զմիմեանց բարիսն յափշտակէին. նա և դորբս և զայրիս զրկէին, զժառանգութիւնն և զհայրենիքն կորզէին, և իւրեանց առնէին...։ Եվ զամենայն զկահ և զկարասին՝ և զամենայն անօթս և զսարքն, մանաւանդ զզարդս կանանց, և թէ գոյր հնար՝ զամենայն ինչս ոսկոց և սրբեցելոյ առնէին... Որկորստութեամբ ևս առաւելեալք, քանզի երկիրն առատաբեր էր և պարարտ, և նոքա մեծատունք. և օր ըստ օրէ ի խորտակակերութիւնն ջանային, և կեր և ի խում զանազան

[1] Յովհ. Մանդակունւոյ Հայոց հայրապետի, Ճառք, Վենետիկ, 1836թ., էջ 52—53։

ծաղկահոտ գինեաւ, ի առասպելս, և ի խաղս, և ի պարս, ուստի իրրև զաղբիւր բղխէին զախտ պոռնկութեանն»[1]

Մ. Ուռհայեցին նույնպես նկարագրում է քաղաքի իշխող դասերի այլասեռված՝ ցոփ ու անբարոյական կյանքը։ Նրա վկայությամբ «Յայսմհետէ ոչ ոք կարասցէ կալ հաստատուն ի հաւատս Տրիստոսի և ի պատուիրանսն Աստուծոյ,՝ ոչ հայրապետ և ոչ վարդապետ, ոչ եպիսկոպոս և ոչ քահանայ, ոչ արեղայ և ոչ կրօնաւոր, ոչ իշխան և ոչ ժողովուրդ. իշխանք յարենան ի գողս և յաւազակս և յափշտակողս, դատաւորք ի կաշառս և յանիրաւ դատաստանս. կրօնաւորք թողուն զանապատս և զմենաստանս և յաշխարհի զբաղմունս դեգերին և շրջին ընդ փողոցս և ի մէջ կանանց, ատեն զաղօթս և թողուն զկարգս կրօնաւորութեան իւրենց, սիրեն զվարս աշխարհի... լինին... ծոյլք և դատարկաբանք... կամապաշտք, անձնասէրք, և ընկերատեաց, շոքմոգք, քսուք, ստախօսք, հպարտք, փառասէրք, անձնահաճք, ինքնահաւանք, որկորամոլք, դինեսէրք և ցանկասէրք... Այլ և իշխանք պիղծ և մեծախտիւ, յանդգնեալ և մոլորեալ. հայրապետք և եպիսկոպոսունք և քահանայք և կրօնաւորք արծաթասէրք առաւել քան աստուածասէրք... Առաջնորդքն և իշխանքն լինելոց են կաշառասէրք և ստախօսք և սուտ երդմունք և ի ձեռս կաշառացն թիւրեն զդատաստանս իւրաւանցն աղքատին... Իշխանք և դատաւորք պոռնկասէրք առաւել քան աստուածասէրք,... մեծարեն զմատնիչսն և զգողսն, յափշտակեն անիրաւաբար զաշխատողաց զինչսն»[2]

Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրականի» մեջ նույնպես տալիս է հոգևոր ֆեոդալական դասերի այլասեռված կյանքը, որոնք զբաղվում են վաշխառությամբ։ Հոգևորականները, նրա կարծիքով, դարձել են «աշխարհասերք», բնակություն են հաստատում գյուղերում և քաղաքներում աշխարհականների հետ միասին և զբաղվում ցոփ ու անբարոյական կյանքով — առևտրով ու վաշխառությամբ։

Առևտրական դասը նստած քաղաքի հրապարակներում խարեությամբ գնում և վաճառում է ապրանքներ, խաբում է անմեղ գնորդին, մանավանդ սուտ երդմամբ ու ստախոսությամբ խաբում է ռամիկին և անդեռին.[3] Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Ֆրիկը, նույնպես բողոքում են սոցիալական այդ անարդարության դեմ։ Ահա մի երկու վկայություն նրանց։

Զկնելին մեղադրում է իրենց թաղավորը,— գրում է Գոշը,— ասելով, թե ինչու եք ուտում ձեզանից մանր կենդանիներին, իսկ նրանք պատասխանում են — քեզանից ենք սովորել, որովհետև երբ գալիս են քեզ երկրպագելու, դու խլում ես նրանց և քեզ կերակուր դարձնում։[4] Վարդան Այգեկցին իր առակներում սոցիալական այդ անարդարությունը արտահայտել է ավելի ցայտուն կերպով։ Նա գրում է, որ մեծատունները, որոնք մշակների ձեռքով կառուցում են իրենց պալատները, մշակում են իրենց այգիներն ու դրախտները, ճաշակում են քաղցրահամ պտուղները, ոչ թե

---

[1] Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ «Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նասր-Շահին պարսից», Վաղարշապատ, 1870 թ. էջ 101—103։

[2] Մ. Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», էջ 53—54, 70. հմմտ. Ա. Լաստիվերտցի, նույն տեղում, էջ 54, Թ. Արծրունի, էջ 230, Կ. Գանձակեցի, էջ 203։

[3] Ն. Շնորհալի, «Թուղթ ընդհանրական», Էջմիածին, 1865 թ., էջ 106—107։

[4] Մ. Գոշ, «Առակք», էջ 69։

հիշում են նրա մշակող մշակին, այլ շնորհակալություն են հայտնում տան տիրոջը։[1]

Աշխատավորության քրտինքով ապրող մեծամեծների և թագավորների նկատմամբ տածված ատելության ավելի ցայտուն օրինակներ մենք գտնում ենք Ֆրիկի մոտ.

«Էՙր ես հագել դու նասիճ ու նստել գինչ մէկ ի նվին,
Ճորտերն են կանգնած յառջևդ ղրոավաշ գինին լընուին,
Տառապեալքն են ի գուռն եկեալ, որ յիւրեանց կըտոր մուրային։[2]

Ֆրիկը իր երկրորդ շրջանի բանաստեղծությունների մեջ սոցիալական այս բողոքը արտահայտում է ավելի ցայտուն կերպով։ Նա ժողովրդի երջանկությունը փնտռում է նրանց առօրյայի, իրական կյանքի և ոչ թե հանդերձյալ աշխարհում։

Նա արտահայտում է իր էպոխայի սոցիալական անհավասարության գաղափարը և տալիս է նյութական ու դասային անհավասարության վառ նկարագիրը.

«Այս ամենայն թող գա անցնի,
Զոր ասացի վասն իմ ազգի,
Եւ այս էր բան քո հրամանի,
Արդար իբրև դատաւորի։
Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի,
Մէկին հազար ձի ու ջորի,
Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքիս։[3]

Ն. Մառը վկայակոչելով մեր պատմիչների և բանաստեղծների բազմաթիվ վկայությունները, անարգանքի սյունին է գամում հայ իշխող դասերին և նրանց քաղաքական իդեոլոգներին։ Ահա Մառի սպանիչ գնահատականը տրված Վարդանին.

«Իր խրատական քարոզներում, որոնք լի են քրիստոնեական ճոռոմաբանությամբ, այդ քրիստոնեական եկեղեցու վարդապետը չի ամաչում ներշնչելու այն միտքը, որ ստրկությունը անհրաժեշտություն է։ «Որդյակ իմ,— ասում է նա,— եթե չծեծես քո ստրուկին, ապա նա կուժեղանա ու կսպանի թագավորին»։[4]

Մառը իր բազմաթիվ աշխատություններում և հատկապես «Ժողովածոյք առակաց Վարդանայ» աշխատության մեջ ցույց տվեց հայ աշխատավոր գյուղացու ճորտական վիճակը և այն հակադրեց իշխող դասերի արտոնյալ և ազատ վիճակին։

Քաղաքից դուրս, նրա շրջակայքում ապրում էր հայ աշխատավոր գյուղացին, որի վրա ընկած էին ոչ միայն ծանր հարկերը, այլ նա էր, որ գենքը ձեռքին պաշտպանում էր իր հայրենիքի անկախությունն ու ազատությունը։ Կիրակոս Գանձակեցին և № 2939 ձեռագրի հեղինակը պահպանել են խիստ ուշագրավ վկայություններ այն մասին, որ երբ մոնղոլական

[1] Առակք Վարդանայ, Գ, 77. ն.
[2] Հայ գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1940 թ. էջ 113։
[3] Նույն տեղում, էջ 117։
[4] Ն. Մառ, „Ани", էջ 54։

խան Զարմաղանը շրջապատում է Անին, և դեսպաններ ուղարկում քաղաք ու առաջարկում է, որպեսզի քաղաքացիները հանձնվեն, քաղաքի գլխավորները չեն համարձակվում պատասխանել դեսպաններին, իսկ «ամբոխ քաղաքին և ոամիկքն սպանեն զպատգամաւորսն»[1] Մեր պատմիչների վկայության համաձայն 10—11-րդ դարերում գյուղացիական ապստամբություններին մասնակցում էին ոչ միայն գյուղացիները, այլ քաղաքի պլեբեյական տարրերը, որոնք կոչվում էին «նվաղուներ»: Միջնադարյան հայկական քաղաքներում բռնկված սոցիալական շարժումների մասին, մենք, ցավոք սրտի, համապատասխան վկայություններ չունենք, սակայն մի բան պարզ է, որ ինչպես գյուղացիական մասսաները, այնպես էլ քաղաքի բնակիչները ակտիվորեն մասնակցում էին բոլոր տեսակի սոցիական շարժումներին, որովհետև նրանց վրա էլ էր ընկած ֆեոդալական հիերարխիայի ամբողջ ծանրությունը: Քաղաքի և շրջակայքի բնակիչները, ինչպես օտար, այնպես էլ շահագործող դասերին տալիս էին մոտավորապես հետևյալ հարկերը — տասանորդ, շալակավոր բաժ, մարդու և անասունի կոռ, շարիաթ, թաստակ, խալե, մրուր, ծուծ, պտուղ: Հարկեր էին տալիս ոչ միայն գյուղացիները, այլ արհեստավորները, մսագործները, ջաղացպանները, հարկի էին ենթարկվում սայլերը, կամերը, քաշող ուժերը, գյուղացին պարտավոր էր հարկերը վճարել բնամթերքով, իսկ քաղաքային կյանքի զարգացման շրջանում, նաև դրամական ռենտայով: Դրամական ռենտան, ինչպես ցույց են տվել մարքսիզմի կլասիկները, հանդես են գալիս այն էպոխայում, երբ զարգանում է ապրանքափոխանակությունը և դրամական շրջանառությունը: Հայ արհեստավորը և գյուղացին դրամական հարկեր վճարելու համար, միայն տիրոջ թույլտվությամբ, կարող էին մեկնել հարևան կալվածները կամ քաղաքները, և աշխատելով օրավարձով, պետք է վճարեին դրամական հարկեր: Ապրանքափոխանակության, դրամական շրջանառության և քաղաքային կյանքի զարգացման հետևանքով, ինչպես ցույց է տվել Էնգելսը իր «Գյուղացիական պատերազմները Գերմանիայում» աշխատության մեջ, քաղաքներում ստեղծվում էին երկու կարգի օպոզիցիա՝ պլեբեական և բուրգերական: Պլեբեական օպոզիցիան, ըստ Էնգելսի, հանդես է գալիս քաղաքների զարգացման առանձին աստիճանում և «բաղկացած էր քայքայված քաղաքացիներից և քաղաքային բնակչության այն մասսայից, որոնք քաղաքացիական իրավունքով չէին օգտվում, այն է՝ արհեստավոր քարգահներից, օրավարձով աշխատողներից և լյումպեն պրոլետարիատի այն բազմաթիվ սաղմերից, որոնք հանդես են գալիս դեռ քաղաքների զարգացման արգեն ստորին աստիճանի վրա»:[2]

Քաղաքային պլեբեական օպոզիցիայի հանդես գալով և նրա ակտիվ մասնակցությամբ, գյուղացիական շարժումներին տրվում էր համեմատաբար ավելի կազմակերպված բնույթ: Մառը դուրս գալով հայ կղերական և բուրժուական պատմագրության դեմ, ցույց տվեց, որ միջնադարյան հայկական քաղաքներում նույնպես հանդես էր եկել պլեբեական օպոզիցիան և միջնադարյան քաղաքը դարձել էր արհեստային արտադրության և համ-

---

[1] Կ. Գանձակեցի, նույն տեղում էջ 244—245 հմմտ. ձեռագիր № 29—39, էջ 980 ա—981 բ:

[2] Ֆ. Էնգելս, «Գյուղացիական պատերազմները Գերմանիայում», Երևան, 1940 թ. էջ 40:

քարության կենտրոն։ Անդրկովկասում և Հայաստանում միջին դարերում համքարությունների գոյության փաստը մատնանիշ է արել Մառը դեռ 1915 թ. իր „Кавказский культурный мир и Армения" աշխատության մեջ։ Այդ աշխատության մեջ նա ապացուցեց, որ Հայաստանում արհեստային արտադրությունը նույնպես ժառանգական էր, որ արհեստավորները ընտրում էին իրենց ավագներին, ունեին իրենց վարչությունները և արհեստավորական եղբայրական կազմակերպությունները, որոնք հետագայում աճելով, վեր էին ածվում համքարությունների։

Ինչպես միջնադարյան Եվրոպայում, այնպես էլ մեզ մոտ՝ Հայաստանում, աշխատանքի հասարակական բաժանումը տարավ առևտրի, հողագործության և արհեստի անջատմանը, նպաստեց քաղաքային կյանքի և արհեստային արտադրության զարգացմանը։ Ֆեոդալական հասարակության զարգացման առաջին աստիճանում արհեստային արտադրությունը զարգանում էր ֆեոդալ կալվածատիրոջ կալվածքի սահմաններում և սպասարկում էր նրա սպառողական պահանջները։ Հետագայում առևտրական կապերի ու շուկայական հարաբերությունների զարգացման հետևանքով, արհեստային արտադրությունը դուրս է գալիս այդ նեղ ու սահմանափակ շրջանակներից և կապվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաների հետ։ Այս պայմաններում նույնիսկ ֆեոդալ իշխանը արհեստավորին թույլ է տալիս փոխադրվելու մի վայրից մեկը, զբաղվելու արհեստային արտադրությամբ և վճարելու բահրա։ Այս շրջանում արհեստավորական ներքին կազմակերպությունները գեռ իրենց վրա կրում էին ֆեոդալական հասարակարգի դրոշմը։

«Միջնադարյան քաղաքներում,— գրում է Մարքսը,— չկա աշխատանքի հասարակական բաժանում առանձին ցեխերի ներսում, առանձին բանվորների մեջ։ Յուրաքանչյուր բանվոր պետք է գետենա մի շարք մասնագիտություններ... հողագործության, անասնապահության և առանձին քաղաքների թույլ կապերը, քաղաքային բնակչության պակասը և նրա պահանջի սահմանափակվածությունը խանգարում էին աշխատանքի հետագա և ավելի խորը բաժանմանը։ Դրա համար էլ յուրաքանչյուր ոք, ով ցանկանում էր վարպետ դառնալ, պետք է տիրապետեր իր արհեստի բոլոր գաղտնիքներին»[1]։

Միջնադարյան հայկական քաղաքներում նույնպես արհեստավորը տիրապետում էր մի շարք արհեստների։ Մառը առաջինը մեր պատմագրության մեջ ցույց տվեց, որ 10—13-րդ դարերում Հայաստանի քաղաքներում վանքերին և եկեղեցիներին կից կային բազմաթիվ «գործատներ»։ Հայաստանում այս շրջանում զարգացած էր մանածագործությունը, մետաղագործությունը, ոսկերչությունը, կավագործությունը, արծաթագործությունը, զինագործությունը և այլ արհեստներ։ Հայաստանի քաղաքներում գոյություն ուներ մոտ 48 զանազան տեսակի արհեստներ։ Հայաստանի այնպիսի քաղաքներում, ինչպիսիք էին Անին, Դվինը, Արծնը, Կարսը, Կաբինը, կային արհեստային արտադրության տարբեր թաղամասեր, որոնք յուրաքանչյուրն ունեին իրենց առանձին համքարական կազմակերպությունները։

[1] Маркс и Энгельс, „Архив", т. I, стр. 235—236.

Արհեստային արտադրության այսպիսի բուռն վերելքի մասին են խոսում նաև մեր աղբային մատենագիրները։ Մխիթար Գոշը իր «Դատաստանագրքում» արդեն խոսում է արհեստավոր քաղաքացիների մասին։ Քաղաքներում կային հյուսներ, դարբիններ, կաշեգործներ, զերձակներ, պղնձագործներ, երկաթագործներ, ոսկերիչներ, մորթագործներ, բրուտներ, կոշկակարներ, շինարար արհեստավոր վարպետներ, որմնադիրներ, տակառագործներ և այլն։

Արհեստային արտադրության յուրաքանչյուր ճյուղ, տեղավորված էր քաղաքի առանձին թաղամասերում, ուներ իր շուկան, պահեստները, արհեստանոցները և ապրանքավաճառության առանձին վայրերը։ Արհեստային արտադրությամբ զբաղվում էին ոչ միայն արհեստավորները, այլև գյուղացիները, հատկապես դաշտային աշխատանքը վերջացնելուց հետո։ Հաճախակի են դեպքերը, երբ արհեստավորը իրեն ավելի բարձր էր դասում, քան թաղավորը և իշխանները։ Մխիթար Գոշը իր առակներից մեկում պատմում է, որ արհեստավորը դիմելով իր որդուն, ասում է. «Թագաւոր ենք արուեստիս»։[1]

Հայաստանի քաղաքներում արհեստային արտադրությունն այնքան էր զարգացած, որ տարբեր ճյուղի պատկանող վարպետները նույնիսկ ունեին իրենց ենթավարպետները — աշակերտները։

12—13-րդ դարերում միայն Անի քաղաքում հիշատակվում է արհեստային արտադրության 38 տեսակներ։ Օրինակ՝ հիշատակվում է, որ Անիում կար «զդակ կարողաց թաղ», «սառաց թաղ», (ոսկերչություն), «կոշկակարանոց», «դարբնոց», «նալբանդանոց», «բազազոց թաղ» (վաճառականներ)։ Ինչպես քաղաքի բնակիչները, այնպես էլ արհեստավորները օգտվում էին քաղաքացիական ավելի լայն իրավունքներով և արտոնություններով, քան գյուղական բնակիչները։ Սկսած 5-րդ դարից, մեր պատմիչները վկայում են այն մասին, որ քաղաքային բնակիչները իրենց սոցիալական կացությամբ, կանգնած են ավելի բարձր աստիճանի վրա, քան ռամիկները ու շինականները։ Քաղաքային բնակչության արտոնյալ վիճակի մասին Մովսես Խորենացին տալիս է հետևյալ ուշագրավ վկայությունը։ «Աղարշ թաղավորը «հրաման տայ՝ և քաղաքացեաց, մարդկան արդոյ և պատիւ լինել առաւել քան զգեղջկաց. և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս»։[2]

10-րդ դարի պատմիչ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին խոսելով Զվարթնոց եկեղեցու կառուցման մասին, հաղորդում է, որ Ներսես կաթողիկոսը, «կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդում արդաց ըստ պայմանի քաղաքականաց»։[3]

Ն. Շնորհալին իր «Թուղթ ընդհանրականում» խորհուրդ է տալիս քաղաքային դասին չարհամարհել շինականներին։[4]

---

[1] Մ. Գոշ, «Առակք», էջ 131։

[2] Մ. Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913 թ., էջ 117—118։

[3] «Յովհաննու. կաթողիկոս «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 88։

[4] Ն. Շնորհալի, նույն տեղում, էջ 106—107։

Մառի մեծությունն այն է, որ նա ոչ միայն ցույց տվեց արհեստային արտադրության զոյության փաստը, այլև ապացուցեց, որ միջնադարյան Հայաստանում զոյություն են ունեցել համքարային կազմակերպություններ։ Ավելին, նա ցույց տվեց, որ արհեստային արտադրության գերազանց մասը տեղական հայկական ծագում ունեին։

* * *

Մառը հետազոտությունները մեզ կովաններ են տալիս մոտավոր կերպով ուրվագծելու միջնադարյան քաղաքների պետական և վարչական կարգերը։

Քաղաքները, ըստ Ն. Մառի, պատկանում էին թագավորներին և իշխաններին։ «Բագրատունիների թագավորության անկումից հետո էլ,— գրում է Մառը, Հայաստանի և Վրաստանի քաղաքների նկատմամբ ընդհանրապես, և Անիի վերաբերյալ մասնավորապես... դեռ շարունակվում էր երկար ժամանակ նայվել որպես մասնավոր սեփականատիրական տիրույթի։ Այսպես, օրինակ, Թամարա թագուհին զանազան քաղաքներ է տալիս քաջարի ռազմիկներին՝ որպես սեփականություն կամ թե օգտվելու նրա եկամուտների մի մասից... Քաղաքներում նստելը, հիմա կապված էր ոչ միայն պատվի, այլև նյութական շահերի հետ. բայց կամաց կամաց նյութական հարստության աղբյուրը և նրան հաջորդող իշխանությունն ու իրավունքը ռազմական քաջության հետ միաժամանակ հանդիսանում էր խաղաղ առևտուրը»։[1]

Աշխարհիկ և հոգևոր տերերը ոչ միայն ունեին սեփական գյուղեր, հայրենիք, վիճակ, այլ նույնիսկ սեփական քաղաքներ։ Ստեփաննոս Օրբելյանի վկայությամբ, միայն Տաթևի վանքը ուներ 677 հարկատու գյուղեր։[2]

Սյունյաց եպիսկոպոսական թեմից իր հսկայական հարստությամբ հետ չէր մնում Սանահնի վանքը։ Նրա կալվածքները տարածվում էին «մինչև ի սահմանս Բագարաց աշխարհի, մինչև սահմանս Վրաց և Տփղսաց և ի սահմանս Նիզ գաւառին, մինչև ի սահմանս Կարնոյ, և ի սահմանս Ծաղկացած, մինչ ի սահմանս տան Շիրակայ»։[3]

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները՝ կուտակելով անչափ հարստություն, ձգտում էին նաև քաղաքական իշխանության, ձգտում էին իրենց ենթարկելու քաղաքային վարչությունը և կառավարչական ապարատը։ Քաղաքային վարչական ապարատի գլուխ կանգնած էր իշխանը, տերը, տուկը, պարոնը կամ ամիրը։ Վարչական բարձրագույն օրգանը մեզ մոտ կոչվում էր ծերերի խորհուրդը կամ երիցանի։

Պետական կարևոր հարցերը երկրի ներքին և արտաքին քաղաքականության խնդիրները լուծելու համար, հաճախակի հրավիրվում էին քաղաքի ազատ բնակիչների ժողով. ժողովի որոշումները կյանքում իրագործե-

---

[1] H. Marr, „Ани" стр. 73.

[2] Ստ. Օրբելեան, «Պատմութիւն...», էջ 309—323։

[3] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, ձեռագիր № 3031, էջ 46—53։

լու համար կային գործակալներ, պետական պաշտոնյաներ, քաղաքներում գոյություն ուներ հարկահավաքների և հարկերի ու մաքսերի կարգավորող առանձին ինստիտուտ, որի պաշտոնյաները կոչվում էին ձեռնավորներ, շահնաներ, մութասիպներ կամ մուսիպներ։ Քաղաքներում կային իշխանական դրուժինաներ, որոնք ոչ միայն պաշտպանում էին իշխանի անձը, նրա արքունիքը, այլև մասնակցում էին պատերազմական արշավանքներին և պայքարում էին սոցիալական շարժումների դեմ։ Անկասկած է, որ միջնադարյան քաղաքում գոյություն ուներ նաև ոստիկանական օրգան, որը հսկում ու կարգավորում էր քաղաքի ներքին կյանքը։ Քաղաքին ենթակա շրջաններն ու գավառները կառավարվում էին առանձին կողմնապահների և տեսուչների միջոցով։ Քաղաքի, ինչպես նաև երկրի բացարձակ իրավական տերը հանդիսանում էր թագավորը։ Իշխանության մեջ թագավորից հետո, երկրորդ մարդը կոչվում էր իշխանաց իշխան։ Նա թագավորի տեղակալն էր և երկրի ու քաղաքի կառավարչական օրգանների ղեկավարը։ Նա էր պատասխանատու թագավորների վասալների բոլոր գործողությունների համար։ Նրան էին ենթակա արքունական կալվածները և պետական գանձարանը։ Նրան էին ենթակա քաղաքի և շրջանի կառավարիչները. նա էր նշանակում ու հանում կառավարիչներին ու բերդապահներին։ Նա էր առաջնորդում պետական բանակը և թագավորական դրուժինան։ Նրան էին ենթակա, վերջապես, բազմաթիվ ձեռնավորները, որոնց օգնությամբ նա կառավարում էր ամբողջ երկիրը։ Մ. Ուռհայեցին վկայում է, որ երբ 1086—1087 թ.թ. Փիլիպոս իշխանը հսկայական նվերներով մեկնում է սելջուկների մոտ, նրա դեսպանությանը մասնակցում էին նաև «իշխանք քաղաքին»։ Երբ Բուղան մեծ բանակով արշավում է Ուռհայ քաղաքի վրա, նրա դեմ են դուրս գալիս «իշխանքն քաղաքացեաց»։

1096—1097 թ.թ. Խլիճ սուլթանը արշավում է Մելիտինե քաղաքի վրա «Իշխան քաղաքին որ ասէին Խորիլ... ամենայն քաջութեամբ կացեալ ընդդէմ սուլթանին...»[1]։

Միջնադարյան հայկական քաղաքները ունեցել են իրենց կառավարիչները, որոնք կոչվել են տերեր։ Նույն պատմիչի վկայությամբ «տեր քաղաքիս կարգյալ յարքային տեսուչ և կողմնապահս»։[2]

Ա. Լաստիվերտցին խոսելով Դվին քաղաքի մասին, գրում է. «Իսկ Ապուսուհար տէր քաղաքին պատերազմ տուեալ ընդ նմա...»։[3]

Քաղաքի իշխանի պաշտոնը գրավելու համար կատաղի պայքար էր գնում տերերի և տուկերի միջև։ Ահա այս կարգի վկայություն կա. «Ոմն ի մեծամեծաց քաղաքին,—կարդում ենք Ուռհայեցու մոտ,—ջանալ առնուլ տուկութեանն դաթոոսս»։[4]

Կիրակոս Գանձակեցին նույնպես վկայում է, որ քաղաքը ուներ իր գլխավորները։[5]

Վ. Բարձրբերդցին՝ խոսելով Անի քաղաքի տիրոջ մասին, գրում է.

---

1 Մ. Ուռհայեցի, նույն տեղում, էջ 252, հմմտ. Բարձրբերդցի, էջ 146։
2 Մ. Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն, Սրուսաղեմ, 1869 թ., էջ 524։
3 Ար. Լաստիվերտցի, նույն տեղում, էջ 43։
4 Մ. Ուռհայեցի, նույն տեղում, էջ 268—69։
5 Կ. Գանձակեցի, նույն տեղում, էջ 264։

«Վասն որոյ ի նոյն աւուրս և ի նոյն սեուսգին սրտակտոր լեալ՝ մեռաւ հայրն Շահնշահ կոչեցեալ, իբրև տէր մայրաքաղաքին Անւոյ»[1]

Ոչ միայն Անին, Դվինը, Գանձակը, այլև Հայաստանի բոլոր քաղաքներն ունեին իրենց տերերը։ Ահա այդ կարգի մի երկու օրինակ ևս։

«Եւ զաթոռն իւր յաւագ որդին տայր ի Մահմուտին. և զկրտսերն զՍելիք, զնէր տէր Գանձակայ Հայոց»[2]

«Ի հինգ հարիւր քառասուն և ինն թուին Գանըշման տէրն Սեբաստիոյ... եկեալ ի վերայ Ս ելտինոյ»[3]

Քաղաքի տերերից հետո քաղաքի վարչական բարձրագույն օրգանը համարվում էր ավագների կամ տերերի խորհուրդը, որը պատմական աղբյուրներում հաճախ կոչվում էր ավագանի կամ երիցանի։ Քաղաքի իշխող դասերը կազմակերպում էին քաղաքային յուրահատուկ վարչություն, քաղաքի արտաքին և ներքին հարցերը լուծելու համար։ Մառը վկայակոչելով Արիստակես Լաստիվերտցու և մյուս պատմիչների վկայությունները, ցույց տվեց, որ հայկական միջնադարյան քաղաքներն ունեցել են իրենց վարչական օրգանները «ծերք քաղաքին»։ Վրաց Եպիփան կաթողիկոսը Անիում թողած վրացերեն իր արձանագրության մեջ պահանջում է, որ հոգևոր դասերը բարեխղճորեն ծառայեն ժողովրդին, իսկ ժողովուրդն իր հերթին հոգա նրանց կարիքները։ Այդ արձանագրության վերջում հայերեն բառերով կա հետևյալ վկայությունը. «Թվ. ՈԿԵ (1216 թ.) ես տէր Գրիգոր իր(իցապետ) և եպիս(կո)պոս. ես Վահրամ ամիրիա քաղաքիս վկայենք, որ կաթողիկոսին հրամանք եղ...»։[4]

Մ. Գոշը իր առակներից մեկում խոսելով արհեստավորների մեջ ծագած վեճերի մասին, ցույց է տալիս, որ այդ վեճերը լուծում էր տերերի ատյանը։

«Պղնձագործ և երկաթագործ ի խնամենալն արուեստիւ ճոխաբանէին և ի լինել հակառակութեանն, յատեան եւս երթային ծերոց...»։[5]

Այս ուշագրավ վկայությունները խոսում են այն մասին, որ առանց քաղաքի երիցանիի հաստատման և ոչ մի հրաման հրապարակվել չէր կարող։ Այդ վկայությունը ցույց է տալիս, որ երիցանին հանդիսանում է քաղաքի վարչական բարձրագույն օրգանը։ Բացի Վրաց Եպիփան կաթողիկոսի ուշագրավ վկայությունից, այդ կարգի վկայություններ մենք գտնում ենք նույնպես Լաստիվերտցու, Ստ. Օրբելյանի և մյուս պատմիչների մոտ։ Արիստակես Լաստիվերտցին շարադրելով Անի քաղաքի պատմությունը, հիշատակում է, որ «Քաղաքացի ղլխավորքն... նստէին յԱնի»։[6]

Նույն պատմիչի վկայությամբ. «Որ յառաջ ցուցաւ Դանիէլի ի տեսողութեան իւրում, և կոչեալ ղղլխաւորս քաղաքին, և մեծամեծս յիշխանացն, ասէ ցնոսա։ Թէ ոք ի ձէնջ վստահանայ ելանել զօրօք յարևելս,

---

1 Վ. Բարձրբերդցի, նույն տեղում էջ 201։

2 Վ. Բարձրբերդցի, նույն տեղում, էջ 155—156։

3 Նույն տեղում, էջ 148։ Հմմտ. Ա. Լաստիվերտցի, նույն տեղ, էջ 43։

4 Н. Марр. „Надпись Епифиния, католикос Грузии (ИИАН, СПб. 1910г. Հմմտ. նաև Հ. Օրբելի «Անւոյ աւերակներն», էջ 57։

5 Մ. Գոշ, «Առակք», էջ 134։

6 Ար. Լաստիվերտցի, նույն տեղում, էջ 24, 25, 38, 42, 43, 78—79 և ուրիշ։

և դաղարեցուցանել զզոռն Պարսից»,[1] իսկ աշխատության մի այլ մասում նա ուղղակի գրում է... «Եկեալ առաջի զլխաւորք քաղաքին՝ խնդրեն, թէ մինչդեռ կենդանի ես, կացո զոք Թագաւոր, որպէսզի մնասցէ առանց խռովութեան քաղաքս»։[2]

Այս վերջին վկայությունը խոսում է այն մասին, որ քաղաքի գլխավորները նույնիսկ կարող են ստիպել թագավորին, որ նա չհրաժարվի գահից, որ նա իրենց հետ կառավարի երկիրը, իսկ այս խոսում է այն մասին, որ քաղաքի գլխավորները այս կամ այն չափով սահմանափակում են նաև թագավորի իշխանությունը։ Ստեփանոս Օրբելյանը նույնպես վկայում է, որ քաղաքներն ունեին «ամենայն զլխաւորք և ազատք...»։[3]

Բացի քաղաքների գլխավորներից, ավագներից և իրիցանուց, վիմական տարեգրությունները հաճախակի արձանագրում են, որ քաղաքներն ունեին իրենց տաղմաչիները, որոնք հավաքում էին առևտրական մաքսերը և հարկերը։ Անիում թողած վիմական արձանագրությունում հիշատակվում է նաև «Մուքսիպ» կամ «Մուսաիպ» տերմինը, որը, Մառի կարծիքով, առևտրի, շուկաների, կշեռքների և չափերի հսկիչն էր ու հավաքում էր քաղաքային հարկերը։ Ալիշանը իր «Շիրակ»-ում նույնպես խոսում է այն մասին, որ Անին ուներ իր տաղմաչը, մուսաիպը, որը չափերի և կշեռքների հսկիչն էր։[4]

Վարչական այս օրգանների գոյության մասին վկայում է նաև Գունդըստաբլը իր «Դատաստանագրքում»։ «Պարտ է գիտենալ,—գրում է նա,— որ զվաճառացն և զբազրնոյն սահմանն ի քաղաք և ի դուրս՝ պարոնութիւնն սահմանէ. զիրաւունքին զչափին և զկշիռն և զայլն յայսպիսեանց և դուքսերն Մուխթարնին ի վերայ այսր սաստելով ըղորդ պահեն»։[5]

Մխիթար Գոշը իր «Դատաստանագրքում» չափի և կշիռի զեղծողների համար սահմանում է հատուկ պատիժ։

Քաղաքի կյանքում վճռական դեր էր խաղում քաղաքային ժողովը։ Այդ մասին մի ուշագրավ վկայություն ենք գտնում Մ. Ուռհայեցու մոտ. «Եւ եղև մեծ ժողով ի քաղաքին յԱնի, եպիսկոպոսաց, հայրապետաց, կրօնաւորաց, վարդապետաց, ազատաց և իշխանաց... որ էր գլուխ ժողովոյն ծերունին Յովսէփ կաթուղիկոսն...»։[6]

Ինչպես նկատելի է, քաղաքի ժողովներին մասնակցում էին միայն քաղաքի ազատ դասերի ներկայացուցիչները։ Այդ ժողովները մեզ հիշեցնում էին ռուսական միջնադարյան քաղաքներում գործող վեչեներին։ Հայտնի է, որ ռուսական քաղաքներում վեչին նույնպես քաղաքի ազատ բնակչության ժողովն էր, որին մասնակցելու իրավունք չունեին ստրուկները, գյուղացիները, կանայք և երեխաները։ Քաղաքներում գումարված ժողովները վճռական գործոն էին քաղաքային կյանքում։ Նրանք շատ հաճախ նույնիսկ սահմանափակում էին իշխանի քաղաքական իրավունքները։

---

[1] Ար. Լաստիվերտցի, նույն տեղում, էջ 78։
[2] Նույն տեղում, էջ 80։
[3] Ստ. Օրբելեան, նույն տեղում, էջ 302։
[4] Ալիշան, «Շիրակ», էջ 101։
[5] Ս. Գունդստաբլ, «Դատաստանագիրք», Էջմիածին, 1918 թ. էջ, 63։
[6] Մ. Ուռհայեցի, նույն տեղում, էջ 77։

* * *

9-րդ դարը, ինչպես դեղեցիկ կերպով բնորոշել է Ծերենցը, Հայաստանի համար հանդիսանում էր ծանր երկունքի ժամանակաշրջան։ Այդ պայմաններում առաջանում է Բագրատունեաց հզոր թագավորությունը, որը երկարատև ու դաժան պայքար է ծավալում սկզբնական շրջանում խալիֆաթի ու Բյուզանդիայի, իսկ ավելի ուշ՝ Բյուզանդիայի ու սելջուկների դեմ։ Այդ դաժան և մահացու պայքարը առանձնապես սրվում է Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի ժամանակ, որ, ինչպես հայտնի է, պսակվում է փայլուն հաղթանակով խալիֆաթի դեմ։ Աշոտ Բ-ից հետո սկսվում է դադարի և խաղաղության մի երկար ժամանակաշրջան, որի պայմաններում Բագրատունիների, Արծրունիների և հայկական մյուս մանր թագավորությունների և իշխանությունների տերիտորիաներում առաջանում են տընտեսական ու սոցիալական այն նախադրյալները, որոնք տանում էին քաղաքային կյանքի բուռն վերելքին։ Այդ արդեն պատմական այն ժամանակաշրջանն էր, որ, ինչպես վկայում է Ասողիկը, ագարակները վերածվում է ավանների, ավանները՝ գյուղաքաղաքների, իսկ վերջիններս՝ քաղաքների։ Դաղաքների, քաղաքային կյանքի բուռն վերելքի ժամանակաշրջանում սրվում է սոցիալական և դասային պայքարը հասարակական տարբեր խավերի ու դասերի միջև։ Ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում ծավալվում է սոցիալական-կրոնական աղանդավորական շարժումները, որոնք իրենց հերթին խարխլում էին ֆեոդալական հասարակարգի հիմքերը։

Արդեն 10 և 12-րդ դարերում Հայաստանում ստեղծված սոցիալական ու քաղաքական նոր հարաբերությունների պայմաններում ձևավորվում է նաև աշխարհիկ կուլտուրան ու գրականությունը։ Աշխարհիկ կուլտուրան ու արվեստը իրենց փայլուն արտահայտությունն են գտնում արվեստի բոլոր բնագավառներում և առանձնապես քաղաքացիական ճարտարապետության բնագավառում։ Հանդես են գալիս աչքի ընկնող գրողներ, բանաստեղծներ, պատմագիրներ, հասարակական ու քաղաքական գործիչներ, օրենսդիրներ և այլն։

Նոր զարգացող ու բարձրացող քաղաքներում կառուցվում են մոնումենտալ շինարարական կոթողներ, պալատներ, տաճարներ, վանքեր, եկեղեցիներ։ Ըստ Ն. Մառի և Թ. Թորամանյանի՝ այդ էպոխայի ճարտարապետությունը իր վրա է կրում նոր աշխարհիկ ոճի ազդեցությունը։ Այս էպոխայի ճարտարապետական հուշարձաններն իրենց նոր ոճով հակադրվում են ասկետական և եկեղեցական խստապահանջ ոճին և արտահայտում են աշխարհիկ կյանքի իդեաներն ու ցանկությունները։ Այդ կոթողները կառուցում են աշխարհիկ իդեաներով և վաղ վերածնության գաղափարներով տոգորված մարդիկ, ինչպիսիք են Տրդատը՝ Անիում, Մանվելը՝ Վասպուրականում և բազմաթիվ այլ անձնավորություններ։

Այդ էպոխայում բարձր վերելք է ապրում պատմագրությունը, հանդես են գալիս Շապուհ Բագրատունին, Դրասխանաներտցին, Թովմա Արծրունին, Ստեփանոս Տարոնացին, Արիստակես Լաստիվերտցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, որոնք արտահայտելով ֆեոդալական դասի քաղաքական իդեաները, այո կամ այն չափով արտահայտում են նաև քաղաքային աշխարհիկ կյանքի գաղափարախոսությունը։ Այդ էպո-

խայում է, որ գործում է Մխիթար Դոշը։ Վերջապես պատմական այս ժամանակաշրջանում զարգանում է նաև աշխարհիկ գրականությունը, հրապարակ են իջնում Նարեկացին, Հովհաննես Իմաստասերը, Ներսես Շնորհալին, Ֆրիկը և ուրիշները։

Այս և այս կարգի բազմաթիվ վկայությունները հնարավորություն են տալիս մեծ գիտնական ակադեմիկոս Մառին, խոսելու 11—13-րդ դարերի մասին որպես հայ ժողովրդի քաղաքային աշխարհիկ կյանքի բուռն վերելքի, որպես վերածնության շրջանի մասին։

Մառը զարգացրեց այն առաջադիմական նոր միտքը, որ միջին դարերը Կովկասում ավելի վաղ են սկսվել, քան միջնադարյան «քաղաքակիրթ» Եվրոպայում։ Նա ցույց տվեց, որ քաղաքային կյանքի բուռն վերելքը, աշխարհիկ ոճն ու ճաշակը, դասակարգային սուր հակամարտությունները արդեն խարխլել էին հայկական ֆեոդալական հասարակարգի տնտեսական հիմքերը, ճեղքվածքներ էին բաց արել նատուրալ տնտեսության ընդերքում և ուղի էի հարթել նոր, ավելի առաջադիմական կարգերի հետագա զարգացման համար։ Նա ապացուցեց, որ հասարակական նոր հարաբերությունները խանգարվեցին ու բեկանվեցին ոչ թե հայ ժողովրդի ներքին կյանքի զարգացման հետևանքով, այլ դրսի բազմաթիվ և աշխարհավեր արշավանքների հետևանքով։ Մառը անարգանքի սյունին գամեց Բյուզանդական թուլակազմ, տկար, բայց նենգամիտ ու խարդախ գործիչների ստոր քաղաքականությունը հայերի և Հայաստանի նկատմամբ։ Նա ցույց տվեց, որ բյուզանդական կայսրության քաղաքականության հետևանքով Հայաստանը զրկվեց իր թագավորներից, արտաքսվեցին երկրից հայ իշխանները, ոչնչացվեցին հայկական զինված ուժերը։ Բյուզանդացիները նվաճելով Շիրակը, Վասպուրականը և ոչնչացնելով հայկական իշխանների անկախությունն ու ինքնուրույնությունը, այնտեղ մտցրին բյուզանդական վարչական և քաղաքական կարգերը։ Բյուզանդական նվաճողական քաղաքականության հետևանքով հայ ժողովուրդը բռնեց զաղթի ուղին և Հայաստանը տնտեսապես ու քաղաքականապես այնքան տկարացավ, որ սելջուկ թուրքերը 11-րդ դարի առաջին կեսից չհանդիպելով լուրջ դիմադրության, նվաճեցին Հայաստանը։

Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ սելջուկ թուրքերը ոչ միայն մեկ, այլ երիցս անգամ պղծեցին ու ավերեցին մեր երկիրը։ Յուրաքանչյուր անգամ նրանք վերադառնում էին նույն տեղը և դարձյալ ու դարձյալ ավերում էին երկիրը, մինչև այն ժամանակ, որ այլևս չէր լսվում հայ աշխատավոր շինականի ու մշակի երգի ձայնն ու անասունների բառաչը։

«Այլ զրաղմադէմ չարիսն, զորս նոքա... գործեցին ընդ զրով ով կարիցէ արկանել...» իսկ այժմ, շարունակում է նույն պատմիչը,—մենք տեսնում ենք «երկիր աւերակ, թափուր ի բնակչաց. քաղաքք կործանեալք, և անդստանանք խոպանացեալք և փշաբերք, ահագին և զարհուրելի անցաւորացն ցուցանիս»։[1]

Սելջուկ թուրքերի արշավանքներից հետո, 13-րդ դարի առաջին կե-

[1] Ար. Լաստիվերտցի, նույն տեղում, էջ 79, 81։

սերում Հայաստանը խորտակեցին վերջնականապես ու անվերադարձ կերպով մոնղոլ թաթարները։

Բյուզանդացիների, սելջուկ թուրքերի և մոնղոլ թաթարների արշավանքների հետևանքով հայ հասարակական կյանքի նորմալ զարգացման ընթացքը կանգ առավ, և մեր ժողովրդի պատմությունը մի քանի դարով ետ տարվեց։